

ԱՐԴՈՆ

ԱՄԱՍԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱԽԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶՈՐԱԾՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԳԱՏԵՐԱԲԻՐՈՒԹՅԱՆ



451 - ՅՈՐԴՆԱՆԵԱՆ ՏՈՐԻ - 1951

ԺԵ. ԿԱՐԿԱՐԶԻ ՈՐՐՈՅ ԿԱՐԿԱՆՈՆԵ ԶՈՐԱԿԱՐԱՆԵ ՈՐՐՈՅ
ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՎԵՑ ՎԿԱՅԻՑՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ - ԻԵ. ՏՈՐԻ

1951

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

— Նոր ձեռնագրուած եպիսկոպոսներ Սուրբ Արքուդ.

երես

257

Եպիսկոպոսական ձեռնագրութիւն եւ օծում.

261

ԿՐՕՆԱԿԱՆ

— Տեռնական Աղօթք (19).

ԳՐ. ՍՐԿ. Հ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ

266

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

— Երազներէն վերջ.

ԵՂԻՎԱՐԴ

269

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

— Դրիգոր Գարանպցիի զժուարիաց
մէկ հասուածին մասին.

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ

273

ՊԵՏԱԿԱՆ

— Կիլիկեան ամբոցներ — Հռովմայի Դղեակ.

ԱՐՏԱՆԱԶԴ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

275

— Եղիշէ պատմադիր եւ Վարդանանց պատմ.
բազմ (7).

ՊԱՐԴԵՆ ԳՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ

279

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

— Ս. Արքուդ հորապապ երեք եպիսկոպոսներու ժամանումը Երուսաղէմ.

284

— Հեռագիրներ.

286

— Ամալեքի հանդիսութիւնք Ս. Արքուդ Ս. Թարգմանչաց ճախակրթարանի.

286

— Եկեղեցականք - Բեմականք.

287

— Պատեմականք.

288

ՏԻՐՈՒՆԻ

— Միաբան Կարապետ Սարգիսեան.

288

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգինն է՝ բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 15

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology

Printed in

JERUSALEM

— ≡ Ս Ի Ո Ն ≡ —

Արեւի Ալպոյանեանի
Գանիրէ — Մարտի

ԻԵ՛. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1951

≡ ՍԵՊՏԵՄԲԵՐ ≡

ԹԻԻ 9

ՔՐԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ԶԵՌՆԱԴՐՈՒԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ

ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ




«Սրոն», իր ջերմ շնորհաւորութիւններուն հետ միասին, կը բաժնէ իմ ընկերները Ս. Յակոբեանց բովանդակ Միաբանութեան և Պաղեստինահայ մեծ ժողովրդին, ի տես Հայաստանեայց Եկեղեցւոյ և մասնաւորապէս Ս. Ստոյ այս նորապսակ եպիսկոպոսներուն, որոնք այսկերպ շնորհազարդուած, իրենց պայծառացնելու Ս. Աթոռը, որ երկար ատենէ ի վեր զուրկ կը ֆնար արձրաստիճան եկեղեցականներէ, և ամբողջացնելու իր նուիրապետութեան արժէքը, որ բացառիկ կարեւորութիւն և նշանակութիւն ունի Սուրբ Տեղեաց մէջ, իրենց մեծ իրաւունքներ և առանձնաշնորհումներ ունեցող մեր Աթոռին համար։

Ամիսներ առաջ, համաձայն Միաբանութեան փափաքին և Գեր. Տեղապահ Հօր խնդրանքին, ազգիս հայրապետը, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գէորգ Երեւանցի, հեռագրաւ կը հրաւիրէր թեկնածուները Ս. Էջմիածին, եպիսկոպոսական նշանադրութեանը համար։

Այս պարագան ատենին կը ներկայացուէր նոյնպէս յաւէտ ողբալի Յորհանի Վեհափառ Թագաւորին, և ընդունելէ յետոյ այս վերջնոյն բարեյօժար թեմութիւնը, երեք եպիսկոպոսացուները՝ Ս. Աթոռոյ Տեղապահ Գեր. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, Պատ. Տնօրէն ժողովոյ նախանգամ Տ. Սուրէն Վրդ. Քէմաճեան և Ելմաթից Տեսուչ Տ. Նորայր Վրդ. Պողարեանը, ընկերակցութեամբ Էջմիածնէն Անթիլիաս, Վեհ. Գարեգին կաթողիկոսին հիւանդատեալ եկող պատմաւորներուն, կը մեկնէին Էջմիածին, եպիսկոպոսական աստիճան ընդունելու համար։

Երկար բայց հաճելի ճամբորդութենէ մը յետոյ, քաղցրագին բախտը իրենեանային ողջունելու մեր սիրելի հայրենիքը և տեսնելու հայրենաշէն մեր ժողովուրդը Արարատի ոտքին, ինչպէս համբուրելու հողը մեր սրբութիւն սրբոց Էջմիածնի, վայելելով Ամենայն Հայոց Հայրապետի հայրական զուրգուրանքն ու ասպնջականութիւնը։



Յուլիա ութին, Ս. Էջմիածնայ Մայր Տաճարին մէջ, ի ներկայութեան ծովածաւալ հաւատաւորներու բազմութեան և եկեղեցական դասու, կ'ընդունէին եպիսկոպոսական ձեռնադրութիւն, իրենց իրրե օծակիրց ունենալով Ս. Էջմիածնայ միաբաններէն Սահակ Ծ. Վրդ. Յովհաննէսեան և Ռումանիոյ առաջնորդ՝ Վաղդէն Ծ. Վրդ. Պալճեանը:

Ձեռնադրութենէն յետոյ կը մատուցանէին իրենց եպիսկոպոսական անդրանիկ պատարագները, շրջապատուած միշտ հաւատացեալներու բազմութենէն:

Յետոյ Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ նորապսակ եպիսկոպոսներուն քաղցրագին առիթը կը տրուէր շրջելու և տեսնելու, մեր երկրի պատմական վայրերը, եկեղեցիներն ու վանքերը, մշակոյթի և արուեստի տունները, զիւղատնտեսական կեդրոնները և կարգ մը դործարանները: Շաբաթներով մեր հայրենի հողերուն և եկեղեցական անդաստաններուն սիրտփանքն ու քաղցրութիւնը ըմբռնելէ յետոյ, վայելած են նաև մեր ազնիւ և հիւրասէր ժողովուրդին սէրն ու յարգանքը:

Տպաւորութիւնը որ իրենցը եղած է նուիրական այդ վայրերէն, մեր ժողովուրդի շինարար ոգիէն ու ճիւղէն, անոր մտքի և մասններու իրագործումներէն, կը մնան սրտագին և անմոռանալի:

Իրաւադրուած Ս. Էջմիածինը իր յուսադրիչ պատկերով, իր Միաբանութեամբ, իր ճեմարանով, իր պաշտօնաթերթով, անուշ երաշխիքներ են որ անկա տակաւ պիտի կրնայ կանգնիլ հոգիներուն մէջ, իր երբեմնի դերովն ու փառքովը: Իսկ Լուսաւորչի Աթոռին բազմաշնորհ զահակալը, աչքառու իր զգօն, կշռադատ և հեռատես շնորհներով, վարչապիտութեամբ և թանկազին փորձառութիւններով, ուրիշ փաստ, թէ Էջմիածինը կրնայ ու զիտէ զգալ եւ մտածել մեր եկեղեցւոյ և ժողովուրդի կարիքը, ստանձնելով անոր անսայթաք առաջնորդութիւնը:

Իրաւամբ նորին Ս. Օծութիւնը շնորհիւ իր պարթև հասակի համաշնորհ մեծութեան, իր ծառայութեան բոլորանուէր և անխնջ ոգիին, իր պարզ, քաղցր, բայց պատկառազգեցիկ արտայայտութեան, դժուարութիւններու առջև յուսահատիլ չզիտնալու և լաւագոյնին ձգտումով լեցուն ոգիով, իր շուրջը ստեղծած է ընդհանուր սէր և համակրանք: Երկիրս ազգային-եկեղեցական համաժողովներ ղումարել կարենալը պատեքագմի ընթացքին, Սասունցի Դաւիթ հրատալի շարասիւնին յաջողութիւնը, Էջմիածնի իրաւունքներուն մէկ կարևոր մասին վերստացումը, ճեմարանի վերաբացումը, որ արդէն սկսած է իր երախայրիք հունձքը տալ, Էջմիածին թերթին հրատարակութիւնը, իր Միաբանութենէն այլևս սպառած Էջմիածնի վանքին շուրջ նոր Միաբանութեան մը վերահաստատութիւնը և տակաւին վարչական ու շինարարական բազմաթիւ կարգադրութիւններ և դործեր, բոլորն ալ արդասիւք իր վարչական ճկունութեան, կամքին և ազգասիրութեան, կարկառուն ապացոյցներ են իր մեծ և անխորտակելի արժանիքներուն:

Իր եպիսկոպոս ձեռնասունները աւելի քան երջանիկ են, որ նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գէորգ Զ. հայրապետի արդիւնաշատ և սուրբ աջէն անոնք բախտը ունեցան ընդունելու եկեղեցական բարձրագոյն աստիճանի շնորհը: Առանց պաշտօնական և նրբազգաց դրուատումներու, որոնց պէտք չունի ամէն

գնահատանքէ վեր մնացող նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գէորգ ազգընտիր հայրապետը, պէտք է ընդունիլ թէ այսօրուան էջմիածինը շատ բան կը պարտի իր գահակալին: Բաներ՝ որոնք դիւրին ձեռք չեն բերուիր, և որոնց համար Լուսաւորչի Աթոռին արդի գահակալը արժանի է բովանդակ հայ հաւատացեալ ժողովրդի անվերապահ սիրոյն և յարգանքին:

Սրտագին և անմոռանալի տպաւորութիւններ նաև մեր ուղողած և մըշակուած հոգերէն: Բացի Արարատեան և Շիրակայ գաշտերէն, զիւղատնտեսութեան համար համեմատաբար աղքատ մեր այժմու հայրենիքը, շնորհիւ թեքնիկ միջոցներուն, բազմապատկած է իր մշակելի հողերու տարածքն ու ուրակը, և դարձած համեմատօրէն արգաւանդ երկիր մը: Յորենի ոսկիով, այգիներու զմրուխտով և ուրիշ մշակելի բոյսերով ալետատան կը ժպտի մեր հողը և կը զրնգան մեր հովիտները: Անտառներու թաւիշը տակաւ կը շատնայ մեր ազուր սարերուն վրայ, իր ծառերու սղոյւղատ նիզակներու խուրցերով սպառնալով երկինքին:

Առիթը ունեցած են տեսնելու նոյնպէս այդ սարերու և անտառներու պաշտպանութեան ներքև և բարիքին մէջ, կարծես ընութեան ծոցէն բխած, մեր հնադարեան վանքերը, ումանք կանգուն և ուրիշները կիսաւեր, մեր նախնեաց հաւատքի այդ բերդերը, դէպի երկինքը պացող հողի տաղաւարները, մեր ժողովրդի գոյութեան դարաւոր այդ հրաշարանները: Հռիփսիմէ, Գայանէ, Շողակաթ, Հաւուց Թառ, Գեղարդ, Սեւան, Մայրաւանք, Ս. Գր. Լուսաւորիչ և ուրիշներ, զորս առիթ ունեցած են տեսնելու, և անոնց միջոցաւ անդամ մը ևս նորոգելու իրենց սիրոյ և յարգանքի ուխտը մեր մեծ նախնեաց հողիներուն հետ, քարակերտ տաղաւարներ չեն միայն, այլ հայ դարերու և ողբէն շէնքին մեծ մարակոցները, մեր գոյութեան կռուանները, ինչպէս երէկ, զուցէ աւելի մանաւանդ այսօր:

Հպարտութիւն տուող տպաւորութիւններ ունին Հայաստանի պատմական թանգարանէն, որ հակառակ իր երեսուն տարիներու կարճ կեանքին, իր մէջը կ'ամփոփէ մեր ժողովուրդի անցեալ մշակոյթին վերաբերեալ թանկագին բեկորները: Կարմիր Բլուրի և Գուլինի պեղումներէն երևան հանուած նոր եւ թանկագին նշխարները և քարէ դարու մնացորդներէն սկսած մինչև մեր ուրարտեան և քրիստոնէութեան դարաշրջաններու հնութեան և արուեստի նմոյշները:

Թանգարանին վարչութիւնը ամէն տարի հայ զիտնականներէ կազմուած գիտական արշաւներ կը կազմակերպէ, և նոր պեղումներով և հաւաքումներով կը հարստացնէ թանգարանի հնագիտական բաժինները, մասնաւոր հրատարակութիւններով պարբերաբար լոյս ընծայելով պատմութեան համար անհրաժեշտ այդ նմոյշները:

Միտքը զոհանող ու լեցնող տպաւորութիւններ ունին Երևանի հանրային Գրադարանէն և Զեռադրատունէն, առաջինը իր երկու և կէս միլիոն հատորներով, բոլորն ալ թուագրուած և իրենց նիւթերուն համաձայն դասաւորուած: Իսկ Զեռադրատունը այժմ շուրջ տասնմէկ հազարի հասնող իր զանձով, մեր քրիստոնէայ հին մշակոյթի փառքը կը կազմէ, առարկայ ամենաշեմ գուրգուրանքի: Տեսած են նաև Երևանի Պետական Պատկերասրահը, իր շուրջ տաս երեք հազար նմոյշներով, ուր ընդհանուր արուեստի պատկանող նկարներուն

հետ, հայ արուեստի աւանդութիւնն է որ կը կազմուի, առաջին անգամ ըլլալով զուցէ մեր վերջին վեց հարիւր տարիներու ընթացքին:

Ասոնց կարգին հայ ոճի քաղցրութիւններով կը հոյակերտուի մեր մայրաքաղաքը, մեր աշխատասէր ժողովուրդի քրտինքով ու բարիքով աճեցուն: Միայն անցնող հինգ տարիներու ընթացքին, կրկնապատկուած է քաղաքը նախ իր ծաւալով, ապա իր շինարարական հսկայ թափով: Այդ հարուածային աճման շնորհիւ մօտ ժամանակէն Զանգուն քաղաքամիջի գետ ըլլալու սահմանուած է: Շնորհիւ մեր երկրի հարուստ շինուածանիւթերուն, տուֆ, զրանիտ, պազալտ և այլ կարգի քարերու, ինչպէս նաև մարմարի ճոխ պաշարին, երևանի շէնքերն ու կառոյցները իրենց ակնապարար գոյներով կը ստեղծեն ուրիշ զեղեցկութիւններ, յատուկ միայն մեր մայրաքաղաքին:

Նախկին դաւառական, հետամնաց քաղաքը իր ծուռ ու մուռ, փոշոտ և խեղճուկ փողոցներով, կիսաւեր կաւաշէն տուններով պատմութեան անցած է այլևս: Երևանը այսօր ծաղկուն, բարեկարգ և մեծ քաղաք մըն է, չորս հարիւր հազար բնակիչներով:

Երևանի ճարտարապետութիւնը ուրոյն է և կենսուրախ: Տուֆաշէն նոր կառուցումներով վերարտադրուած են մեր ժողովուրդի ճարտարապետական հարուստ ժառանգութեան լաւագոյն աւանդները, շնորհիւ հանդուցեալ թամանեանի նախագծին: Երևանէն դատ, շինարարական խոշոր աշխատանքներ եղած են նաև մեր երկրի միւս զխառր քաղաքներու և շրջանային կեդրոններու մէջ, բոլորն ալ առաւել կամ նուազ, հայ ճարտարապետութեան ոճի շնորհներով դրոշմուած:

Սրբազան հիւրերը հրաւիրուած են ներկայ ըլլալու նոյնպէս կարգ մը երաժշտական և թատերական խաղարկութիւններու: Երևանի Պետական Օբերան այդ տեսակէտով մեր բնական արուեստի և մշակոյթի խոշոր օճախներէն մին է, հիմնուած 1933ին: Ա. Սպենդարեանի «Ալմաստ»ը, Ա. Տիգրանեանի «Անուշ»ը, Տ. Զուխաճեանի «Արշակ Բ.»ը ամենէն շատ սիրուած խաղերը կը ֆիան հայ մայրաքաղաքի հասարակութեանը համար, որոնք շարժանկարի ալ վերածուած՝ կը բեմադրուին ամենահեռուօր վայրերու մէջ անգամ:

Իսկ մեր ճարտարարուեստի, և արդիւնաբերութեան կեդրոնները, եւ կրթական հաստատութիւնները կը ներկայացնեն բազմերես և խիստ յառաջացած մարդեր, որոնք հատորներով իսկ չեն սպառիր: Կը բաւէ այս մասին եթէ ի մտի ունենանք թէ միայն երևանի շուրջ աւելի քան քառասուն զործարաններ կան, և համալսարանէն դատ մէկէ աւելի բարձրագոյն դպրոցներ, արուեստի և գիտութեան զանազան ճիւղերու յատուկ, շուրջ երեք հարիւր հազար ուսանողներով:

Ի տես այս բոլորին, ճշմարիտ հայը միակ մաղթանք մը կ'ունենայ իր հայրենակարօտ շրթներուն, որ Տէրը խաղաղ ու անվտանգ պահէ մեր երկիրը, մեր ժողովուրդը, որպէսզի անիկա առիթը ունենայ աւելի զարգանալու եւ ստեղծագործելու, ի վայելումն և ի փառս ներկայ և ապագայ հայ սերունդներուն:



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՍ

Շաբաթներ առաջ, գիշերինք թե շուտով պիտի մեկնեինք Հայաստան եւ Էջմիածին, Նորին Սրբուրբուն Ամենայն Հայոց հայրապետէն եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելու համար: Սակայն այս հաւաստիքը գերազանցօրէն կ'անէր ու կը մեծնար, երբ հայօրէն կը մտածեինք թե այս բարեպատեն առիթով պիտի տեսնեինք նաեւ մեր սիրելի հայրենիքը, ալեւոր Մասիսը, նորանորոգ երեսանք, Էջմիածինը, Արարեսեան դաշտը: Պիտի համբուրեինք մեր երկրի սրբազան հոգը, եւ իրական ու երջանիկ պիտի փառեինք մեր հազարամեայ սրբութիւններուն:

Տարիներով մտածեւ էինք մեր աւետեաց երկրի խորհրդանիշ այս նուիրականութիւններուն: Հոն՝ այդ հոգեւուն վրայ էր որ օր մը Հայկ Նահապետը իր վրանները լարեց, Արամ իր հոգին պայծառացուց, ուր Տրդատն ու Լուսաւորիչը ծրագրեցին, ուր Սահակ եւ Մեսրոպ սեղծագործեցին եւ որոնց գերեզմաններն ու յիշատակները դարեւով միշտ մեր արիւնով բարմացած, իրենց սիրոյն կանչեւ են հայրենի խորհուրդով եւ օծութեամբ լեցուն հոգիները:

Անհամբեր էինք այս բոլորի համար, եւ զանոնք վայրկեան առաջ տեսնելու կարօք, անանուն զգացումով կը ծանրանար մեր ներքը, երբեմն անբացատրելի տխրութիւն եւ յանախ թերեւո՛սն բերկրանք առնելու չափ:

Տարիներու անցրպէսն ու յանախ լռութիւնը մեր զոյգ սրբութիւններուն շուրջ, տարած տարածայնութիւններու եւ լուրերու փոխանքներ, զորս երբեմն երջանիկ ականատեսներ եւ մերքընդմերք տեսնում հովեր նշած էին մեր հոգիներուն մէջ, խռովիչ հակադրութիւններով կը տարբերեինք մեր բովանդակ եւրոպիկը: Այս պարագան սակայն, աւելի արտառուչ գեղեցկութեամբ մը մեր աչքերուն առջեւ կը բերէր մեր զոյգ սրբութիւնները: Թող թե հոգեկան բնոյթ ունեցող այս տարբերումներին մէջ, աւելի քան հզօր կը մնար մեր հաւատքին փաստը:

Վերջապէս անհրաժեշտ բոլոր կարգադրութիւններէն յետոյ, նամբայ կ'անենք դէպի Հայաստանն ու Էջմիածինը, դէպի մեր տարիներու երազը, դէպի Հայ ժողովուրդի աւետեաց երկիրը: Պէյրուք, Հոռոմ, Փրակա,

Մոսկուա, բոլոր այս քաղաքները, հակառակ իրենց բազմակողմանի շահեկանութեանց, իբրեւ ծանրացներ կը ծառայէին միայն մեր մտքին ու հոգիին, երկաթե կօշիկներ, ինչպէ՞ս սովոր է ըսել մեր ժողովուրդը, նպատակաւոր մեր նամբուն վրայ: Ուրիշ առիթներով զուցէ, արուեստի եւ պատմութեան կորովներով հարուստ այս ուսանանքներ, հարստարուեստի սխրանքներով ալ տրոփին, առիւններին զմեզ, սակայն այժմ անոնք կը մնային ձգտոյն, հակառակ իրենց այս բոլոր հանգամանքներուն: Մենք երեք երջանիկ ուխտաւորներս, նամբուն վրայ տարիներու մեր երազին, ըզմանով ու արցունքով կը սպասեինք այն ցանկալի վայրկեանը, երբ օդանաւը վերջնական եւ անոյգ կերպով պիտի մօտեցնէր զմեզ մեր հայրենի հողին:

Վ Ե Ր Ջ Ա Պ Է Ս

Մոսկուայէն, վերջին կայանէն, կը մեկնեինք Հայաստան, գիշերուան ժամը մեկին: Երկար ու սպասողագին է նամբան, վերջնալ չուզելուն չափ: Իսկ մեր համբերութիւնը գրեթէ հասած: Անա Սեւանայ լիճը, Հայրաւորք, ձայնեց օդանաւորդ հայր, շուրջ տասերկու ժամերու նամբորդութենէն յետոյ, երբ մենք ինքնաթիռի պատուհանէն մեր նայուածքները մշուշին մէջ խրած, Մասիսը տեսնել կը փորձեինք: Ձայնին անակնկալը ցնցեց զիս, եկած թե ոչ բաժնուած բան մը իր ծանրագին քիւները քսեց հոգիիս, եւ մշուշներու փոքրուն մէջէն կարելի եղաւ մեզի նշմարել ջուրի կապոյտ կտորներ, որոնք կը շարժէին ներմակ ծուկներու հետ միասին, վարը մեր նայուածքներուն ներքեւ:

Օդանաւը կը զգացնէր տակաւ իր վայրէջքը, երազելով զարկերը մեր սիրտերուն: Անա Մասիսը ձայնեց Մոսկուայէն մեզի ընկերացող ուսանողը, որ նամբորդութեան ընթացքին ժամերով հայկական երգեր երգած ու պատմած էր Հայաստանի մասին: Ուրախութեան արցունքներ մշուշեցին նայուածքս, սիրտս կեցաւ կարծես, պահ մը զգացի թէ խորհրդաւոր բան մը կրնար պատահիլ, որ կ'ուշանար սակայն: Հեռուն, մշուշներու ծովէն դուրս կը ժայթեին զոյգ կատարները գէրէ լեռան, իրենց մտածումին ու զգացում-

մին բովանդակ խոսութեամբ, առիճներով մեր տոգիւն նայումները: Ամպերու հովանոցը իջած մեծ Մասիսի կոսարին, մեր կարօտակն նայումներէն կը խլէր, երկնին մէջ խոյացող իր գեղեցկութիւնը:

Մօտեցած ենք արդէն Հայաստանի մայրաքաղաքին, ինքնաթիռը քանի մը պոչներէ յետոյ, կանգ կ'առնէ երեւանի օդակայանը: Էջմիածնի ներկայացուցիչները, ձեմարանի սարկաւազներն ու սաները, գլխաւորութեամբ Տ. Սահակ Ծ. Վրդ. Յովնանեանի կ'ընդունին մեզ: Բարի գալուստի նառեր, փոխադարձ արտայայտութիւններ: Յետոյ ինքնաշարժերով, բազմաթիւ հետաքրքիր նայումներու եւ ժպիտներու մէջէն դէպի *Քոմունիստ* պանդոկը:

Այս բոլորը չեն յաջողիր սակայն զիս արբնցնել իմ մէջս ծփացող երազէն: Մայրաքաղաքին փողոցները կը բացուին ու կը գոցուին աչերու առջեւ, բայց բարձրացած երեւակայութեան դէմ կը մնայ կանգնած Մասիսը, կասողի ցուլի մը նման իր եղջիւրները խրած երկնի կուրծին:

Ինքնաշարժի պատուանէն կարօտակա՜հերս նորէն կը փնտռեմ Յաւիտեական Լեռը, ան կ'երեւի ինծի նոյն խորհուրդով, ինչպէս երբեմն իմ երեւակայութեան առջեւ: Արեւակը քափած է իր առաս ոսկին հորիզոնին վրայ, նետելով իր գործ շրջագետքը Արարտի ոսկին: Վերջալոյսի քաղցրութեանը մէջ աւելի քան խորհրդաւոր է հայ լեռնաշխարհի Հսկան:

Է.Ջ.Մ.Ի.Ա.Ծ.Ի.Ն

Յաջորդ առտու ժամը 11 ին *Քոմունիստ*էն կը մեկնինք Էջմիածին: Երեւան մայրաքաղաքին մէջ մեր անցուցած գիշերը բռնուած երազներու եւ ապրում խռովներու օրանք մը եղաւ: Ճամբաներու յոգնութենէն եւ զգացումներու խոյանքէն արկուած մեր ջիղերուն վրայ կար անօրինակ խայտառակ մը՝ գոր մայրական գիւղը ու հայրենի տուն վերադարձող զաւակը միայն կրնայ զգալ:

Աբովեան փողոցէն կը շարժին մեքենաները: Պողոտայի աչքին վրայ, Քանափոխ ուղղութեամբ, լայն ու ծաղիկներով մշտմիկ հրապարակի մը մէջեղը, կը բարձրանայ Աբովեանի արձանը, կարծես մեր հողին սիւրէն բխած, անուրիկն զաւակ «Վերջ Հայաստանին», իր տառապալից բայց քաղցր

ու մանկունակ նայումներ նետուին: Ու կը մտածեմ, ամբողջ ցեղի մը ցար կարենալ զգալու հրաշքն է որ ժայթքած ձուլերէ այդ կորովը, այն *Սիրուն Վաթանին* մէջ, որուն իր միտքն ու կեանքը *զուրպան* քաւ ինքը:

Աբովեան փողոցի վերջաւորութեան, կը շեղինք դէպի աշ, ուր նամբան յամրօրէն կ'իջնէ դէպի ձոր: Ահա Հրազդանը կ'ըսէ շարժալարը: Զով այիք մը կ'անցնի հոգիէս, ի լուր եւ ի տես մեր լեռներու այս ոգիին, որ Սեւանէն մինչեւ Երասխա անսահման երկարի մը նման կը սուրայ մեր հայրենական դաշերէն, փրփրեալս ու զրնգուն, ծիծաղ ու բարիք սփռելով իր շուրջը: Ու կը մտածեմ հակառակ իր խօսքի ու խնդուն յաւիտեական երիտասարդութեան, ինչ յուշեր ունի ան մեր ցաւերէն ու յաղթանակներէն: Անկաշառագրոյց բայց անգիր պատմութիւնն է մեր հոգիին ու ժողովուրդին:

Յաղթական կամուրջին վրայ ենք արդէն, կառուցուած ի փառս հայրենական պատերազմի: Կը սուրան ինքնաշարժեր երեւանէն Էջմիածին տանող նամբուն վրայ, Արարտեան դաշի կարկուտ մեղրի գոյն ունեցող արեւուն ներքեւ: «Արագածը, Արագածը» կը ձայնեն շուրջիներս: Աչերուս հետ միասին մտածումս կը կենար անոր քառասուն խորանին դէմ, որուն առջեւ դարերով վառեր եւ հայուն սիրտը, լուսաւորելով մեր արիւնցն ու միջին դարերը: Ու շրջաններու վրայ կը շինուին բառերը մեծ բանաստեղծին:

Կը սուրայ ինքնաշարժը, սակայն ամբոխուած է հոգիս, անձանօր եմ ինքզինքիս կարծես, ուրախութեան ծանր քախիծը կը ննէ արիս վրայ: «Կանքեղն անմար, լոյս առած Լուսաւորչի հայութեան»: Ու կեանքիս մէջ՝ գուցէ առաջին անգամ ըլլալով, կը զգամ քե մտածումը որ անցեալէն կուգայ, կը ցուցնէ հոգիս:

Կը մօտենանք Վաղարշապատին, ոչինչ մնացած է Տրդատ քաղաքի մայրաքաղաքէն: Ճամբու եզերքներու վրայ կը յորդին այգիներու եւ պտղատու ծառերու ալիքները: «Լուսաւորչի զեփիւր» մեզի կը բերէ անոնց քաղցր բուրմունքն ու կազդուրը:

Ահա Զուարթնոց Տանարի աւերակները, անասանիկ Հովիտի մէջն ու Շողակաքը: Սակայն ես ոչինչ կը տեսնեմ, անցեալը,

այս անուններուն ի լուր, եկեր կանգնեւ Էդեմ, շահ աւելի խօսուն, քան նոյնիսկ իւրականութիւնը: Ու կը լսեմ նորէն մտածիկ ձայնը որ հոգիիս մէջ կ'արձագանգէ «Անոնք որ հոս ասեցօք ծննդդեցինք քովէ քով»: Եւ մտածումս իր բունքը քակող ջուրին պէս քաղցրորէն կը կառչի անոնց, ներկայէն խուսափելու աստիճան:

Ջանգալներու ձայնը յանկարծական բայց անուշ շարժում մը կը ստեղծէ կեսօրուան աւելու մածնած օդին մէջ: Անցնելով վաղարշապատի լայն հրապարակէն, որուն կ'իջիս Գեորգեան նեմարանը, կը մտնեմ վանքի պարիսպէն ներս, ու քիթէս դարձումս մը

իսկ առանց ուզելու, կ'արբնեան դարերը մեր պատմութեան, որոնց խորքէն նայուածք առ նայուածք հազարներ այժմ ինձի կը նային կարծես: Խորանին առջեւ ուր մենք մտնեցեցինք մեր աղօթքը, քանի իշխան եւ մեակ իրարմէ քարքար յոյզերով ծաւր էին արգիւտ իրենց մեջքերը, եւ կամարներու այս շինք ու խնկաբոյր ոլորներուն մէջ, ինձի կուգար քէ կը ծփային սակաւին ալիքները վաղնջական ու հարազատ ձայներու: Մարդեր որոնք իրենց երգը շինեցին այս քանդակը, եւ անոնց ներքեւ քաղնուած, կազմեցին իրենց ցեղին յաւիտենականութիւնը: Այժմ կ'ուրացում ու հերժում, չի կրնար



Գեր. Տ. Նարայր Եպս. Պապարեան Գեր. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտեան Գեր. Տ. Սուրեն Եպս. Փեմհանեան

յետոյ՝ կը կենանք Ս. Էջմիածնի կաթողիկէին առջեւ: Հաւաքուող բազմութեան ալիքը կ'առաջնորդէ մեզ ինքնաբերաբար դէպի Տառնին դուռը: Հրաշափառով ներս կ'առաջնորդուինք, եւ Իշման Սեղանին առջեւ ծննդդեց կը կատարենք մեր ուխտը, մեր Սրբութիւն Սրբոց մայրավանքի կամարներուն ներքեւ:

Նորէն ինքզինքիս հետք չեմ, կը նայիմ եկեղեցւոյ կամարներուն եւ որմերուն, եւ կը զգամ քէ մտածութիւնս սեւեռումէն, նոյն

անցեալ անհուն եւ խռովիչ ուժգնութիւնը՝ որ տեսիլք առ տեսիլք կ'արբնեայ այս քանդակը:

Թափօրով կ'առաջնորդուինք Տառնին դուռ, սակայն նայուածքս կը մնայ կառչած վեհապալի զմբերներուն, ու ներքին ձայն մը քնկերացած հոգիս անցնող մտապահներուն, կ'ըսէ ինձի, քէ այդ Տառնար քանդակը շինուած չէ միայն, քէ իր գոյութիւնը պայմանաւորուած չէր նկարագրին կառոյցով, այլ հայ ոգիի ներքոյ ուժովն ու յաւիտենականութեան երաշխիքով, վասնզի

Էջմիածինը հոգեւոր տունն է հայութեան: Շահ-Աբբասները կրնան ֆակել իր ֆաբերը եւ այլուր փոխադրել, բայց ան կը մնայ անկործանելի սաղաւարը հայ հոգիին, հայ հոգին վրայ կորոզուած:

Թափօրը կ'առաջնորդէ մեզ Վեհաբան, ներկայանալու համար Վեհափառ Հայրապետին: Պզտիկ սպասումէ մը յետոյ նախարանին մէջ, կ'առաջնորդուինք ընդունելութեան դահլիճը: Լուսաւորչի դարաւոր գահուն վրայ նստած, պատկառելի բայց ժպտուն աչքերով Հայրապետը աւելի քան սպաւորիչ է: Ծնրադիր կ'առնենք իր աչքը: Պատկառանքով մտնելու իրաւունքս ներդաշնակած, Նորին Ս. Օծուրիւնը կը հետաքրքրուի մեզմով, մեր ուղեւորութեան հետ կապ ունեցող պարագաներով: Յետոյ իր հետաքրքրութիւնը կը տարածուի Պաղեստինի եւ Սփիւռքի հայ ժողովուրդի կեանքին շուրջ, գալու եւ յանգելու իր սիրելի եղբայրակցին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Տ. Տ. Գարեգին կաթողիկոսի հիւանդութեան: Կը զգանք քեզ արցունքով կը սօզուրին աչքերը, եւ կը խոնարհայ ձայնը Վեհին: Իր տարիներու արակցին ծանր հիւանդութիւնը, ֆաղք ու խռովիչ անցեալի մը յիշատակներով ծփուն, կը խռովէ իր զգայուն հոգին:

Հակառակ երիտասարդ տարիներուս, բախք ունեցած եմ վայելելու մեծ մարդերու ներկայութիւնը: Անոնք, ինչ ազգի ալ պատկանած ըլլան, կարելի չէ չնանչնալ գիշերն առաջին իսկ հանդիպումէն: Իրենց անձէն կը ծաւալի անսովոր ուժ մը, որ փոխանակ ընկնելու՝ կը զօրացնէ կեցումով եւ ուրախութեամբ կը լեցնէ զեզ: Այդ քսոյզ զգացումով եւ սպաւորութեամբ կը նախմ ազգիս արժանաւոր Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ. Զեօրեանի կաթողիկոսին, ու կը լեցունի մեծ այն հպարտութիւններէն, որ մեծ մարդերու այս սերունդը միայն զիսկ առնել:

Ո Ւ Ե Տ Ա Դ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Յուլիս եօթի Շաբաթ օրը, առտուն ժամերգութենէն յետոյ, Նորին Ս. Օծուրիւն Վեհ. Հայրապետի կարգադրութեամբ, հինգ ընծայեալներս ծունկի իջման Սեղանին առջեւ, կատարեցինք մեր հաւատարմութեան ուխտը՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ, Ս. Էջմիածնի եւ անոր արժանաւոր զահակալին նրկասմամբ, ինչպէս նաեւ կրկնելու մեր յանձ-

նառութիւնը հայ ժողովուրդի ծառայութեան, համաձայն մեր Եկեղեցւոյ դարաւոր սկզբունքներուն:

Թեւեւ մարդոց առջեւ, սակայն Աստուծոյ եւ մեր խղին հետ դեմյանդիմանութեան այս վայրկեանը, հոգեկան անդոհի եւ գերագոյն յուզումի պահերէն մին պիտի ըլլար մեզի համար: Անոնք ապրումներ են՝ որոնք դիւրին չեն բացատրուիր, յուզումներ են՝ որոնք չեն վերլուծուիր, վասնզի պահեր կան որ վեր կը մնան մեզմէ, երբ զմեզ անգամ մը եւս կ'առաքեն հայ պատմութեան դարաւոր խորհուրդին, երբ կը ծնրադրենք հաւրիւրներու տառապանքին ու երազին առջեւ:

Ահա քեզ ինչու այլեւս զգացում դարձած մեր մտածումին մէջէն պահ մը կարծես իրենց տղանցք կը կատարեն մեր Եկեղեցւոյ մեծ դեմքերը. որոնք օր մը ծնրադրեցին այս սեղանին առջեւ, իւրաքանչիւր իր սերէն, իր նուիրումէն եւ իր կրակներէն բան մը դնելով այս նուիրական Հաստատութեան խորանին, մտնելու համար յետոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ ամբողջ փառին, կարմիր գեղեցկութիւններուն եւ անբաւարար կանանչ յոյսին աստուածային ամպնովանիին մէջ:

Ս. Էջմիածնայ դարաւոր կամարներուն ներքեւ պահ մը ունեցայ այն զգացումը քեզ՝ երախտաւորեալներու այդ շարանը ժպիտներ իր շրթներուն, վասնզի իրենց գործին ու մտածումին շարունակութիւնն էր որ կը վերանորոգուէր այս ուխտադրութեամբ: Ուրախ մեծ են մեր դարերը, իրենց ամպարագիծ վեհին ծանրութեան մէջ բաբախուն: Իսկ զանոնք ապրողները համակ հոգի եւ տառապանքի հանդիսարան: Ու մենք կ'ընենք մեծ երգումը, մեծ իրականութեան մը նախտեսլան, անասան պահելու համար փառքեր մեր Եկեղեցւոյ եւ իրաւունքները մեր ժողովուրդին:

Հազիւ ձեռքազատուած անցեալէն, կը դառնամ մեր օրերու իրականութեան, ու մտածումները կը գունաւորուին իմ մէջս աւելի քան նոյն տեսութեամբ: Եկեղեցական բարձրագոյն աստիճանի այս ուխտագնացութեան մէջ ինչո՞վ կը տարբերէր մեր հակասագիրք անոնցմէ՝ որոնք մեր պատմութեան ծով դժուարութիւնները դիմակալեցին, մոռցած իրենց պզտիկ մարդը, կեցան իրենց ժողովուրդի ցաւերուն դիմաց, սրբազան ու կարմիր ուխտով մը զրահաւոր:

Քիչեր այսօր կրնան լմբռնել, մանաւանդ գնահատել, իրենց բայց փրկարար փաստը այս ուխտագրութեան: Քիչերու համար հայ եկեղեցականը ամբողջական փառքն է այն հզոր երազներուն եւ իմաստին, որոնք մեր օրերու անկարելիութեանց մեջն են: Բայց անգամ կեանքի կը վերածուին, սակայն կեանքի աղբ եւ հայութեան համար կ'անդրադարձեն: Հակառակ մեր դարու աներազ եւ անբոխ նիւթապատշուրեան, անհրաժեշտ են մարդեր, որոնք զիսնան բարձրութիւններու սեւեռել իրենց նայուածքը, իրենց Աստուծոյ՝ որ անհետանելի պատկերն է կեանքի բարձրագոյն լմբռնումին, իրենց ազգային լաւիմաց շահերուն՝ որ սպասն է անոր գերագոյն արժեքներուն, Աստուծոյ վերջ միակ իրականութիւնը նշմարիս հայ եկեղեցականին համար: Այս օրուան ուխտակիրը իր իրենց եւ մեծ է այնքան՝ որքան իրենց եւ մեծ կը մնայ կեանքն ու նախապայքը իր ժողովուրդին՝ օտարութեան հովերուն եւ զրկմաններուն նեղումը:

Այդ օր, իշման Սեղանին առջեւ, մենք անգամ մը եւս կրկնելով մեր ուխտը, կը հազնէինք նախապայքը մեր ժողովուրդին, քեզ կրակէ շաղկի մը նման, սակայն սիրովը եւ բոլորանուէր յոյսութեամբը անոր ծով կարիքներու յանձնաձեռնումին: Բոլոր անոնք որոնք այս ուխտով ու նամբայով ծառայեցին սերունդներու, արդար անուններ ու փառքեր կը մնան մեր պատմութեան, որոնց իրազեմունքները կը դառնան սխալներ, երբ զարնուին նման զիրենք ծնող ժողովուրդի կեանքի պայմաններուն: Եւ բոլոր անոնք՝ որոնք այսօր կամ վաղը նոյն երդումով ու մտածումով կը շարունակեն Հայաստանեայց եկեղեցւոյ դարաւոր նամբան, կը մնան ամենավստահելի լոյսն ու առաջնորդը մեր օրերու գիշերամբիկ մթութեան եւ մեր ժողովուրդի մոլոր խաղափումներուն դիմաց, իբրեւ անցեալէն եկած բացխափիկ լոյս եւ ներկայի անապահով ապահովութիւնը:

Այս խորունկ վստահութեամբ եւ յառաջագրութեամբ, կը ստորագրէինք մեր ուխտը այդ օր, էջմիածնի Տաճարին մէջ, ի ներկայութեան երեւելի ու մանաւանդ աներեւելի հոգիներու որոնք կը զգայինք քեզ լեցնէին այդ պահուն Տաճարը, եւ մեր հոգիներուն առջեւ կը կենային իբրեւ սրագին վկայութիւններ մեր նոր ուխտին:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕՐՈՒՄ

Յուլիս ուրի առաւօտը, արեւուն անուշ զգացումով մը կը բացուէր էջմիածնի մէջ: Կանուխէն Տաճարն ու շրջակայքը կը հովանային հետաքրքիր ու ցնձայից հաւասարեակներով: Մօտիկ ու հեռաւոր վայրերէն անոնք բոլորը սրտաւրով կը սպասէին օրուան մեծ հանդէսին:

Ժամը օտարին կը դողանջէին զանգակները, իրենց խորհրդականչ խայտաբեր տարածելով միջեւ հեռուները: Վեհափառ Հայրապետը եկեղեցական բափօրով վեհաւանէն եկեղեցի կ'իջնէր: Իրեն կը հետեւէին հինգ եպիսկոպոսոսները: Եկեղեցւոյ աւանդաւան մէջ կը զգեստաւորուէին բոլորը, համաձայն իրենց աստիճաններուն:

Չգեստաւորուէին յետոյ նստէն կը հնչէին զանգակները էջմիածնի կարողիկէին, խոր ու քրքուռ, լայնցնելով ու քաղցրացնելով հոգիները բոլոր անոնց՝ որոնք եկած էին այդ օր իրենց երջանիկ մօրը կանչին:

Յետոյ, հոժ ու խորհրդաւոր, կը հնչէր դպիրներու «Խորհուրդ խորին»ը, առաջնորդելու ձեռնագրութեան բափօրը, եկեղեցական բոլոր աստիճանաւորներէն կազմուած: Իշման սեղանին առջեւ Հայրապետը կը լուար իր ձեռքերը եւ յուզուած ու մեղոյ ձայնով կ'արտասանէ «մեղա»ն: Պատասխել յետոյ պատարագի ընթացքը, կը խրկարէ Տաճարը, եւ կ'առաջնորդուի դէպի եկեղեցւոյ հարաւային բերդ, Ս. Յովնանէն սեղանին առջեւ կ'արտաւերելու ձեռնագրութեան արարողութեան առաջին մասը:

Խորհուրդակար յանուն եկեղեցական դասուն, բաղկացած եպիսկոպոսներէ, քահանաներէ, արկաւագներէ, ջանքեկարներէ, երգմենացիներէ, ընթերցողներէ, դռնապաններէ, սաղմոսաւագներէ, ինչպէս նաեւ իշխաններէ եւ աղմակներէ, որոնք զգեստաւորուած կը հրաւիրուին մաս կազմելու արարողութեան, ըստ աւանդական սովորութեան, Հայրապետին կը մատուցանէր ընծայացումները եւ իրենց բոլորին խնդրանքը, քեզնաւորները եկեղեցւոյ բարձրագոյն աստիճանին բարձրացնելու: Երբեքորդ աստիճանի շուրջին էինք արդէն, երբ Հայրապետը կը հրամայէր մեզ բոլորիս կենալ արծրանշան գորգին վրայ, իբրեւ խորհուրդ մօտիկ եւ հոգիի բարձրաբոխ խոյանքին առ Աստուծոյ:

(Շար.)

ԿՐՕՆԱԿԱՆ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ

Դ. — Այս փառաբանութեամբ կը սորվինք թէ մեր բոլոր եղածը և ունեցածը Անոր փառքին համար են: «Ամենայն ինչ վասն փառացն Աստուծոյ»: Այս է քրիստոնէին կեանքի ծրագիրը իր համառոտութեանը մէջ: «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»: «Տեսան է երկիր լրիւ իւրով»: Անոր բոլոր գործերը իր փառքին անխելի լրարեմաններն են: Երկինքի հրեշտակները Անոր փառքը կ'երգեն և երկրի բոլոր արարածները Անոր փառքին համար են. հետեւաբար, մարդը, արարչագործութեան պատկը, Աստուծոյ զուլս-գործոցը, ի՞նչպէս չմտնակցի այս քաղցրալուր քնարերգութեան, ի՞նչպէս չձայնակցի այս տիեզերապարփակ խմբերգին:

Արդէն Փառաբանութիւնը, իր ամբողջական էութեան մէջ, Աստուծոյ փառքը երգել և զԱստուած փառաւորել կը նշանակէ: Ահա ճիշդ այդ պատճառաւ պարտաւոր ենք Փառաբանութիւն երգել ամէն օր, ամէն ժամ, ամէն բոլոր. որովհետեւ, Փառաբանութիւնը մեր հոգեւոր երախտագիտութիւնն է առ Աստուած բարձրացող, երախտագիտութիւնը, որ սեղանէն ծառացող ծուխի ծուկններուն պէս, վե՛ր, վե՛ր կը սլանայ մեր սիրտերէն: Անոր համար պէտք է որ անտեսուի այս յոյժ էական մասը մեր աղօթքներուն. — Այսինքն՝ թէ անոնք չըլլան միայն աղօթք, աղաչանք, հայցում և խնդիրք. շարունակ ուղել և ուղել: Պարտինք նաև մեր հայցումներէն առաջ բաղձալ Անոր անուան սրբութիւնն, Անոր Թագաւորութեան զայլը, կամքին կատարումը. ասոնցմէ ետքը ակնարկ մը նետել այն բարիքներուն վրայ զորս Աստուծմէ ընդունած ենք, ու յետոյ երախտապարտ զգացումներ բարձրացնելով փառաբանել զԱյն որ մեր «Հայրն» է, որ յարաբուզիս աղբիւր է բարիքներու, որ Աստուածն է փառաց. ահա այս է Փառաբանութիւնը, ճշմարիտ աղօթքի ոգին:

Նաև այս փառքին, Աստուծոյ փառ-

քին մէջ է յոյսը մեր փառքին ու փառաւորումին: Ո՞վ է ան որ կրնայ ըսել թէ աշխարհի բոլոր փառքերուն և պերճանքներուն մէջ գտած է ճշմարիտ յագեցումը իր փառաւանջիկ բաղձանքներուն: Մեր սիրտը յաւէտ անկուշտ է և պիտի մնայ աշխարհի ստուեր-հաճոյքներէն ու փուճ փառքերէն. յաւիտենական փառք մը կը բռնկի հոն, անկէզ մօրենիին պէս, որ կ'այրի ու կ'այրի՝ բայց չհատնիր բնաւ: Ուրեմն, ի՞նչ բան պիտի յագեցնէ մեր այս փառքը, ի՞նչ բան պիտի կշտացնէ մեր այս կարօտը՝ եթէ ոչ երկնաւոր փառքը, Աստուծոյ փառքը: Յիսուս կ'ըսէ. «Ինծի տուած փառքդ անոնց տուի»: Ասով կը թելադրէ թէ քրիստոնեան պէտք է որ սիրտ տայ երկրաւոր փառքերու, պէտք է որ նուիրուի երկրաւոր վայելքներու: Սակայն, այս էի նշանակել թէ քրիստոնեան պէտք է միշտ տառապի աշխարհի վրայ, ո՛չ խնդութիւն վայելէ և ո՛չ հաճոյք. բնաւ երբեք. հապա կը նշանակէ թէ ան իր գոհացումը մի միայն անոնց մէջ չփնտռէ, մի միայն անոնց սիրտ չտայ: Որովհետեւ, քրիստոնեային, ճշմարիտ հաւատացեալին ամէն ինչը սուրբ է — նիստ ու կացը, ելքն ու մուտքը, հաճոյքներն ու խնդութիւնները: Եւ այդ վայելքներն ու երանութիւնները կրնան նոյնիսկ համարուիլ մէկ ստուերապատկերը վերին վայելքներուն և երկնաւոր երանութեանց: Ուստի, պէտք է որ քրիստոնեան իր ապագայ փառքին ազամանդ յոյսը փոխէ ներկայի ապակիի կտորներուն հետ: Այս յոյսն է այն մեծագին մարգարիտը, զոր երբ իմաստուն վաճառականը գտաւ, զնաց ծախեց իր բոլոր ինչքը և իր բոլոր հարստութեան գնով գնեց զայն: Քրիստոնեան պէտք է ունենայ այս հոգեւոր իմաստութիւնը:

Հետեւաբար, ո՞վ Քրիստոնեայ եղբայր, երբ կ'աղօթես Աստուծոյ փառքին համար և կը խոստովանիս թէ Անորն է փառքը, հոգեկան աչքերուդ առջև կը պարզուի այս պատկերը, մինչև իսկ տարտամօրէն, որովհետեւ, աչքերդ երկրաւոր բիծերով աղտոտած՝ թերեւ տկարատես ըլլան: Ահա այդ հեռապատկերն է որ ամպի ու կրակի սիւնդ պիտի ըլլայ այս կեանքի անապատին մէջ: Երկնաւոր փառքը, ի՞նչպէս բացատրել զայն, ի՞նչպէս պատկերացնել զայն մեր

յաճախ թեւատուած երեւակայութեանց առջեւ. երեւակայութեանց՝ որոնց համար շատ անգամ անկարելի է սաւառնիլ մինչև անոր անհունութիւններուն սահմանները: Բայց նորէն Աստուծոյ փառքին համար երգած մեր Փառաքանութեան մէջ կը համտեսենք երկնաւոր փառքը և կը ծրարենք մեր ապագայ փառաց յոյսը: Երբ կը վերառաքենք Ս. Ոսկերեքանի օրհնածայն փառաքանութիւնը — «Փա՛ռք քեզ Աստուած, փա՛ռք քեզ յաղագս ամենայնի, Տէր, փա՛ռք քեզ», այն ատեն կը զգանք թէ զԱստուած փառաքանելու հետ Անոր փառաց փառակից ըլլալու մեծ կոչումն ալ ունինք:

Ահա այսօրինակ հոգեգրաւ և սրտապնդիչ ներշնչումներ կ'արթնցնէ մեր մէջ այս արքայութեան, զօրութեան և փառքի փառաքանական հայցուածքը: Կը զգանք թէ Աստուծոյ Թագաւորութեան կը վերաբերինք և պէտք ենք անոր Օրէնքներուն համաձայն կեանք վարել. կը հաւատանք՝ թէ Աստուծոյ զօրութեամբ կ'ապրինք աշխարհի վրայ և կ'ազատուինք չարէն. վերջապէս, կը ջանանք Անոր փառքին համար ապրիլ, մեր սիրտին ու միտքին բոլոր կարողութիւններով, մեր ինչքերով, մեր հարստութիւններով, դիրքով և համբաւով, մեր տենչերով ու տիրացումներով, այսինքն՝ մեր բոլոր հոգիով:

Բայց այս շինիչ բոլոր զգացումներուն հետ ունինք նաև այն գիտակցութիւնը՝ թէ Աստուծոյ Թագաւորութիւնը, Զօրութիւնը և Փառքը յաւիտենական են: Քանի որ Աստուած ինքը յաւիտենական է, բնականաբար Անոր Թագաւորութիւնը, Զօրութիւնը և Փառքն ալ պէտք է որ յաւիտենական ըլլան. յաւիտենական Աստուծոյ մէջ ժամանակաւոր ստորոգելիքներ հակասական պիտի ըլլային: Եսայիի կանխածայնած Մանուկին, որուն «ունն է իշխանութիւնը», անուն տրուած է նաև «Յաւիտենական Հայր»: Որովհետեւ, այն Աստուած — Մանուկը պէտք էր յաւիտենական ըլլար: Հոս է ահա մեր յոյսերուն անսպասութեան գաղտնիքը. մեր յոյսերը, որոնցմէ զուրկ ապրիլը անկարելի է մեր յարաբարձ հոգիներուն համար: Մեր երկնաւոր Հայրը մեր Յաւիտենական Հայրն է. յաւիտեան կը վայելենք Անոր խնամքներն ու հոգածութիւնները. յաւիտեան կը շնորհէ մեզ

իր անհատնում բարիքները. յաւիտենական շնորհներով կը լիացնէ մեր աղքատութիւնն ու կը պծնէ մեր թշուառութիւնը: Մինչդեռ մեր երկրաւոր հայրերը ժամանակաւորապէս կրնան խնամիլ մեզ և առժամանակեայ է անոնց գուրգուրանքն ու հոգածութիւնը:

Ահա այս յաւիտենականութեան մէջ է նաև մեր յոյսը յաւիտենական կեանքի համար: Ինչպէս որ Աստուծոյ իշխանութիւնը յաւիտենական է, այնպէս ալ յաւիտեան պիտի իշխեն իր սուրբերը, Իրեն հետ. այս է յաւիտենական կեանքը: Կեանքի, աճեցուն, լիառատ կեանքի կարօտը ունինք մենք: Մեր սէրերը, զգացումները, բաղձանքները քիչով չեն գոհանար: Երկրաւոր կեանքը, իր կարճ օրերու ընթացքովը, չի գոհացներ զմեզ: Յաւիտենականութիւն մը միայն կրնայ պսակել մեր հոգիներուն արժարժուն տենչանքները: Ինչպէս որ յաւիտենական են Աստուած և Անոր ստորոգելիները, նոյնպէս ալ Աստուած յաւիտենականութեան զրոյժ մը զրած է մեր հոգիներուն վրայ. և այդ իսկ պատճառաւ՝ օրուան մը, երազի մը, վաղանցիկ ստուերի մը, արագաշարժ կկոցի մը տպաւորութիւնը կը թողու կեանքը մեր վրայ: Հոգիին յաւիտենականութեան համար ունեցած բաղձանքները, անմահութեան բաղձանքը ուրանալ՝ իր ցանկութեանց հոսանքներէն զլիսու պտոյտ ունեցող ինկած մարդոց և պիերելի հնարքն է: Այդ սուտ հնարքով, այդ փուճ խօսքերով գոնէ լուցնել կ'ուզեն խիղճին բողբոջը, ներքին ձայնը: Բայց, սխալ, սխալ է այդ ուրացումը և աւերիչ. կործանարար է այդ լայն ճամբան ու ընդարձակ դուռը, որ կորստեան կ'առաջնորդէ: Յաւիտեան պիտի ապրի հոգին, պիտի գոհացուն անոր փափաքները, և պիտի հրճուի յաւիտենական վայելքներով: Եթէ վերցնենք այս հաւատքը, այս խոր համոզումը՝ ո՞ր մարտիրոսը պիտի ուզէր իր արիւնը թափել իր կրօնքին համար, ո՞ր աշխարհաւրացը սիրով պիտի փափաքէր թողուլ ամէն բան և խաչը ուսը առած հետեիլ Փրկչին. ո՞ր հաւատացեալը պիտի կամենար մերկանալ իր հարստութիւնէն, փառքէն ու վայելքներէն: Յիսուս անգամ, եթէ չըլլար յաւիտենական կեանքը և հոգիները յաւիտենապէս շահելու միջոցը՝ յօժարաբար պիտի տանէ՞ր Խաչին տառա-

պանքները. — ոչ երբեք: Ուրեմն, մի աշխարհամուտներ, մի, մի՛ ջանաք ուրանալ այս մեծ ճշմարտութիւնը. արեւ միայն կոյրերուն համար լոյս չունի: Այո՛, առանց այս յոյսին, հոգիի անմահութեան ակընկալութեան, յաւիտենական կեանքի այս հանելուկը չի լուծուի:

Ուրեմն, Աստուծոյ յաւիտենական Թագաւորութիւնը, Զօրութիւնը և Փառքը մեր հոգիներուն համար ալ կ'երաշխաւորեն յաւիտենական կեանք ու երանութիւն. երկինք մը՝ լի վայելքներով, աշխարհ մը՝ լի հաճոյքներով, և այս բոլորը՝ յաւիտենական... Այո՛, պիտի չգայ օր մը երբ Աստուած մերկանայ իր Թագաւորութենէն, Զօրութենէն և Փառքէն. նոյնպէս ալ պիտի չգայ օր մը երբ մեր հոգին մերկանայ յաւիտենականութեան յոյսէն — երկնաւոր կեանքի ակնկալութենէն:

Ամէն կնիքով կը կնքենք այս փառաւոր Փառաբանութիւնը, ինչպէս նաև Տէրունական Աղօթքը: Ամէնը հաստատել է, Այո՛, ըսել է, թող ըլլայ՝ ըսել է, ճշդիցիոն է, ստեղծագործութեան «եղիցի»ին չափ վսեմ: «Ամէն»ը ինքնին հայցուած մըն է՝ եթէ բոլոր հոգիով արտաբերուի. ինքնին աղօթք մը: Եւ արդէն պարզասիրտ ուսմիկը, օր իր զգացումները չի կրնար բառերով բացատրել, չի կրնար խօսքերով արտայայտել իր հոգիին բաղձանքները, և «անբարբառ հառաչանքներով» միայն կ'աղօթէ, ինչով կը յայտնէ իր ներքինը՝ եթէ ոչ սրտաբուխ «Ամէն»ով մը մասնակցելով Եկեղեցիին և ջերմեռանդ հաւատացեալներուն հոգեւոր աղօթքներուն: Ասկէ զատ ինչ զիւրին, պատկերոտ և իմաստալից բառ մը պիտի կրնար թարգման ըլլալ նոյնիսկ ամենէն ուսմիկ հոգիներուն:

Ուրեմն, Ս. Հոգին Աստուած թող այս «Ամէն»ը մեր սիրտերուն ներքին վերացման ճշմարիտ արտայայտութիւնը ընէ, սորվեցնելով մեզ աղօթել այս սուրբ ու վսեմ աղօթքը, կրկնելով այս հիանալի Փառաբանութիւնը, հաւատքի կատարեալ փոստնութեամբ:

Ահա այս կերպով, Փառաբանութեան այս ոսկի բառերով, կը վերջանայ Տէրունական այս գոհար Աղօթքը: Փառաբանութիւն մը, որ Մենդեան զիշերուան մէջ մանկացեալ Աստուծոյ մօտը շուրջ երգուած Փառաբանութեան ներդաշնակ մէկ արձագանգն է, և որ կը հնչէ դարերէ ի վեր: Այս Փառաբանութեան անուշ և հոգեգրաւ արձագանգին մէջ թշուառներ կը

սիրտուին, արցունքներ կը շողանան, ցաւեր կը բուժուին, վիշտեր կ'ամօքուին, սիրտեր կը ցնծան, հոգիներ կը հրճուին, մարդկութիւնը նորաստեղծ կը փայլի իրրեւ զարդարեալ հարս մը երկնաւոր Փեսային, Եկեղեցին կը պայծառանայ և կ'ընդարձակուի, և վերջապէս, Աստուած կ'ուրախանայ և գոհունակութեան վսեմ շեշտով մը կը գոչէ. — «Բարի է»:

Ուրեմն, Քրիստոնեայ եղբայրներ, կրկնենք Տէրունական պատուական Աղօթքը հոգիով ու ճշմարտութեամբ: Որովհետեւ, ան յարմարագոյն աղօթքն է երկինքի ներքեւ, ան ճշմարիտ թարգմանն է մեր հոգիներուն, իրական գոհաբերութիւնը առ Աստուած: Անոր անթերի ամբողջութենէն կը ծորին պաշտում և սէր առ Աստուած, ճշգրիտ գիտակցութիւն մեր պէտքերուն, և հոգեբուզի միմունջ փառաբանական: Թող սորվին և կրկնեն զայն մանուկներ, որովհետեւ անոնց թօթով լի գուններուն յարմար ու սիրտերնուն խօսող աղօթքն է այս: Թող սորվին ու կրկնեն զայն պատանիներ, որովհետեւ իրենց նորաշարժ զգացումներուն և կարօտներուն համապատասխան աղօթքն է այս: Թող սորվին ու կրկնեն զայն երիտասարդներ, որովհետեւ իրենց պէտքերը պարզուած պիտի գտնեն անոր մէջ: Թող միշտ կրկնեն զայն ծերեր, որովհետեւ իրենց ծերութեան մխիթարութեան ցուպն է այս: Թող սորվին զայն օրիորդներ, որովհետեւ իրենց զգայուն սիրտերուն շատ կը ներդաշնակի այս աղօթքը: Թող սորվին ու կրկնեն զայն մայրեր և հայրեր, որովհետեւ՝ իրենց որդեսէր սիրտերուն սնունդն է այս: Վերջապէս՝ ամէն ժամանակի, պարագայի, տարիքի, սեռի հասկացողութեան և զիրքի աղօթքն է այս, Աղօթքներու Աղօթքը, Տէրունական պատուական, նուիրական, գոհար Աղօթքը:

Իհնք ալ սորվինք ու կրկնենք զայն, Քրիստոնեայ եղբայրներ, միայն զգոյշ ըլլալով՝ թէ ինչ հոգիով կը կրկնենք զայն, ծառայելով մեր երկնաւոր Հօր Թագաւորութեան, Զօրութեան և Փառքին համար: Ըշմարիտ որդիներ ըլլանք Աստուծոյ, մեր երկնաւոր Հօր, փառակից՝ Որդւոյն, և առնօթ՝ Ս. Հոգւոյն. վերջապէս, օրհնեցու և փառաբանող Սուրբ Երրորդութեան, որուն վայել է թագաւորութիւն, և զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԳՐ. ՍՐԿ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

(Վերջ՝ 19)

ԵՐԱԶՆԵՐԷՆ ՎԵՐՁ...^(*)

Երազներէն վերջ, եկած եմ ահա
 Երկիր իմ անուշ,
 Մըշուշէն օտար խոնաւցած հողիս
 Արեւոտելու,
 Եկած եմ ահա նրման արքային
 Երբեմն պանդուխտ,
 Հայրենի հողին զրահն հագնելու:

Քանի՞ դար է որ, այդ չեմ յիշեր ես,
 Խորթ ճամբաներէն ոտքերս արիւնոտ
 Քալեր եմ այսպէս,
 — Խոստացուած հեռուն —
 Դեռ քանի՞ դարեր պէտք է քալեմ ես,
 Մայրական սիրոյդ արժանանալու:

Տակաւին երէկ մերը չէիր դուն,
 Մենք յաւերժ պանդուխտ:
 Տակաւին երէկ աւերներուդ դէմ,
 Դուսաններդ ամէն,
 Երգեցին միայն արին ու բողոք,
 Վէրքերուդ փոխան հազար վէրք առին
 Ձաւկըներդ հերոս:

Օրերըդ եղան համրիչ արիւնոտ,
 Դարեր դարերով,
 Երկիր իմ անուշ, երկիր իմ երազ,
 Դետերըդ կարմիր, լեռներըդ հրդեհ,
 Որոնց բոցին դէմ դուն քանի՞ անգամ
 Տեսար հըրկիզուիլն շէներուդ փարթամ
 Եւ երազներուդ դեռ մատաղատի:
 Ճիւղերէն անոնց երկինքներուդ մէջ,
 Սառեցան յաճախ թեւերն հաւքերուն:
 Պատկերին դէմ այս պիտ' մնար շուար,
 Ուղեղն Տանդէին, զերթ աղօտ լուսին:

(*) Քերուած մը՝ եղիվադի լրացալու մօտ «Հայրենական» Հասարէն:

* * *

Բայց այսօր կաս դուն,
 Երազներէն վերջ բոցերէն յետոյ,
 Աստղերէն անդին,
 Նայուածքին ներքեւ գոռ Արարատին:

Բայց այսօր կաս դուն,
 Շիրիմներուն քով մեռելներուն մեր,
 Որոնց անհունէն բեկոր առ բեկոր
 Շինուեցաւ պատկերդ:
 Եւ երակներուդ մէջ կը կայլակին
 Հարազատներուդ քրտինքն ու ժրպիտ,
 Որոնք դարէ դար, կապելու համար
 Վէրքերդ անհամար,
 Բաշխեցին կեանքի իրենց հուսկ ծուէնն:

Բայց այսօր կաս դուն.
 Շէներուդ դիմաց կ'աճի, կը մեծնայ
 Երգ, ժրպիտ ու պար:
 Ու կ'եռայ կուրծքը գիւղերուդ հազար,
 Քաղաքներու շէն.
 Կը շնչեն ուժգին գործարաններուդ
 Թորքերն հըրաշունչ:

Կը բացուի թեւը հրակայ բանակին
 Քու նոր մանկութեան,
 Որոնք վաղ նորէն պիտ' հարսնեւորեն
 Կողերդ արգաւանդ,
 Պատրաստելու նոր գինին սրբազան
 Երէկուան ցաւին իբրեւ բալասան,
 Վըրէժին վաղուան:

Բայց այսօր կաս դուն,
 Եւ դաշտերուդ ծոց, խորն հովիտներուն,
 Ուր մինչեւ երէկ կ'աճէին միայն
 Փուշեր ու տատասկ,
 Կը ծըփայ այսօր ցորենի ոսկին,
 Զըմբուխտն այգիին.
 Մինչ ջրվէժներուդ ջահերուն դիմաց
 Կը բացուի անտառն,
 Բիւր նիզակներու խուրձերով պողպատ:

Անդին, լեռներու զբմբեթներն հուժկու,
 Հարթարած վահան ընդդէմ շանթերու,
 Բացած զիրկն իրենց,
 Կը թորեն այսօր պրդինձ ու մարմար,
 Փառքերուդ գալիք,
 Իբրեւ սուրբ խըմոր յուշարձաններու:

Ու ցանցը կախարդ, մրտրի, հրաշքի,
 Որ քաղաքներէն գիւղերը յետին
 Փրուած իր ոսկին,
 Նոր ճանաչներով կը լեցնէ հոգին
 Հարազատներուդ:
 Մագիստրոս է նոր երէկուան հերքուած,
 Մաշուած գիւղացին.
 Ու քաջ հռետոր՝ հովիւն խօլամիտ:
 Ռատիոյին առջեւ անոնք ուշադիր,
 Կը լրանն զեկոյց,
 Ու կը մտածեն ճակատագրին դէմ
 Վաղուան աշխարհին:

Ու երգն է հըզօր հերոսներուն մեր,
 Թեւերուն վրայ ծիածաններու
 Ելերտրական.
 Եւ ըստեղներուն՝ մեր երկաթագէն
 Հանդերձող բարիքը մեր հողերուն,
 Ոյժին ու խելին,
 Նպատակասլաց մեր ճարտարութեան
 Եւ նոր արուեստին:

Քաղաք, շէն ու դաշտ,
 Այգի ու անտառ,
 Արեւներուն դէմ բըռնած թագն իրենց
 Այս կախարդական,
 Կը տրոփեն խոր աւիշներուն տակ
 Կապոյտ ու ծածան,
 Լիճէն Սեւանայ մինչեւ Հըրազդան,
 Զուրերն այդ բոլոր,
 Դարերով ծեծուած անհուն լըբումի
 Խարազաններով,
 Այսօր լոյսերու եւ կենդանութեան
 Կազմած ծիածան,
 Նոր աճումներու
 Երգով կը զընգան:

* * *

Պատկերին առջեւ այս սրբազրաւ,
Ինծի կը թըլի լըսել դարերու
Զայնն արցունքահոս,
Բայց փորձ ու յստակ:

— Ժամանակն է որ, փառքին դէմ այս նոր,
Ասպետներն ամէն հետտ, քայլամուրոր,
Պատմութեան տրտում ջուրերուն նետն,
Այլեւս ուշացած զայրոյթ ու բողոք:

— Ժամանակն է որ,
Հոգիներուն խոր,
Քաղցրանայ պատկերն այս հրաշակերտ,
Իրրեւ սուրբ նշխար,
Սեղաններուն դէմ
Մեր տառապանքին ու խաչելութեան:

— Ժամանակն է որ,
Հաւատքով անշեղ ընդունինք իսպառ,
Թէ խորշն այդ անուշ
Կաթիլ է կարմիր,
Հայ սիրտէն ինկած մեր սուրբ հողերուն,
Եւ խմոր կախարդ,
Վաղուան երազին:

* * *

— Բայց ատենն է որ,
Յուդաներն ամէն,
Վերադարձընեն Կայափաներէն
Իրենց ըստացած
Արծաթն երեսուն:

ԵՂԻՎԱՐԴ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՐԱՆԱՂՑԻԻ

ԴԺՈՒԱՐԻՄԱՑ ՄԷԿ ՀԱՏՈՒԱԾԻՆ ՄԱՍԻՆ

Գրիգոր Դարանաղցի, իր ժամանակագրութեան մէջ (երուսաղէմ, 1915) կը նկարագրէ արեւու ամբողջական խաւարում մը, որ երեք ժամ տեւած է և տեսանելի եղած՝ Քեմախի և չրջակայ գաւառներուն մէջ 25 Յուլիս 1590ին:

Հաւանականաբար նոյն տարին է որ, արեւու այս խաւարումէն առաջ, չորեք-տասանամեայ գեոատի նախարարած Գրիգոր «բռնութեամբ» արեղայ կը ձեռնադրուի: Զեռնադրութենէն ետք ալ Գրիգոր կը շարունակէ իր համեստ սակայն բանաստեղծական գրադուրը:

Արեղայ նախարարածը այս խաւարումը «գուշակութիւն» մը կը համարի այն ըմբոստութեան զոր նոյն տարուան Օգոստոսին վերջերը Քիւրտերը կը յարուցանեն նոյն չրջանին մէջ: «Ոչ թէ երեւի, այլ աննշան մարդիկ, գողեր և աւազակներ, հովիւներ և ռամիկ շինականներ, կը գրէ Դարանաղցի, համախմբուեցան և Քղիի պարոնին վրայ երթալով զայն սպաննեցին և տունը աւարի տունին: Յետոյ, Եկեղեաց գաւառին՝ Երզնկայի վրայ քաւեցին, մեծ վնաս պատճառեցին և հրձգութիւն ըրին: Իշխան մը կամ պարոն մը չկար որ անոնց դէմ երթար: Էրզրումի փաշան հեռու էր. մինչև որ անոր լուր տրուէր, անոնք երկիրը աւերակի կը վերածէին»:

Բարեբախտաբար, Իպրահիմ աղա (կամ պէկ) անուն սիփահի մը սակաւաթիւ (*) ձիաւորներով, բայց առջևէն քշելով զիւղերուն նախիրները իրենց նախարարածներով, երազընթաց կը քալէ ըմբոստ Քիւրտերուն դէմ:

Հունձքի եղանակն էր և հողը՝ երաշտացած ու փոշիի վերածուած: Զիւրուն և նախիրներուն հանած փոշին օդին մէջ մտալ

(*) Տպագրին մէջ՝ «առեալ զտկաւ սկայ զօրս իւր»։ Սակաւ սկայ բառերը կը կարգամ սակաւալայ:

ամպի մը պէս կը բարձրանայ: Ըմբոստները, կարծելով թէ Էրզրումի փաշան էր որ իր բոլոր զինուորներով իրենց դէմ եկած էր անուսարտափի կը մատնուին:

Նոյն պահուն, ըստ Դարանաղցիի, Քիւրտերը ուրիշ արհաւիրքի մըն ալ ահանատես կ'ըլլան: Երկինքէն ձիաւորներ կ'իջնէին՝ կանանչ նիզակներ բռնած և իրենց վրայ կը յառաջանային: Այս երկրային ու երկնային միացեալ ոյժերը փախուստի կը մատնեն ըմբոստները, իսկ Իպրահիմ աղան (կամ պէկը) զանոնք հետապնդելով անխնայ կը կոտորէ, մինչև մայրամուտ: Քիչեր միայն կը յաջողին փախչիլ:

Կը պատմուի թէ, կը շարունակէ Դարանաղցի, Իպրահիմ մինակը հարիւր Քիւրտ սպաննած էր, իսկ ուրիշ սպանեալներուն թիւը մարդ չգիտցաւ (էջ 23-24):

Զսպումի այս գործողութեան առթիւ, Դարանաղցի կը պատմէ մանրազէպ մը, որ ահաւասիկ.

«Եւ Իպրահիմ պէկն ընդ կոսորելն մին այլակեցոյ բացազլուիս եւ գիսաւոր յապսալ առասպելէր, կը պատմէ Դարանաղցի, ընդդէմ Իպրահիմ պէկին եւ փչէր ի նա, ասելով՝ կայմայ կայմայ, պէն թարին տակուլեմ, ասէր. եւ փչէր եւ փրփրայր: Եւ ընդ առասպելին, եհաւ զգլուխն եւ ընկեց եւ զլուխն ի քաւալին գեռ այնպէս զօղանջէր: Եւ արքն որ ընդ նմա՝ տեսն զմիջօքն տաւառնուղ կապեալ որպէս գօշի, յորժամ լուծին ի միջացն, տեսն լի ոսկով լցեալ: Ասաց Իպրահիմն՝ քէ ասէր թարին, չեմ իրաւ ելեր: Եւ այսպէս բարձան Ասուծով չարքն յերկէ» (էջ 24):

Դարանաղցիի այս հատուածին մէջ յառաջ բերուած են քանի մը օտար բառեր, որոնց իմաստը ժամանակագրութեան հրատարակչին՝ հոգեւոյս Մեսրոպ վարդապետ (յետոյ՝ արքեպիսկոպոս եւ պատրիարք) նշանեանի բառերով «մօլթ մնացած» են (տե՛ս Ներածութիւն, էջ 28):

Այս օտար բառերն են «կայմայ, կալմայ, պէկն քալին տակուլեմ», որոնց իմաստին «մթութիւն»ը ալ աւելի թանձրացած է հատուածին վերջընթեր նախադասութեան («Ասաց Իպրահիմն... չեմ սխալ ելեր» սխալ կէտադրութեամբ (*):

(*) Կէտադրութիւնը կատարուած է հրատարակչին կողմէ:

Աղեներն է որ հրատարակիչը ելեր բառը կարծած է ելլել բային բացասական ձևը, քանի որ ստորակետով մը զատած է քա-
բինը չեմէն, և «չեմ իրաւ ելեր» կարգա-
ցած է, հասկնալով «իրաւ չեմ ելեր», աշ-
տինքն «սխալներ եմ»: Բայց այս ընթեր-
ցւածով հատուածին իմաստը իրապէս մութ
և անհասկնալի կը մնայ: Ընդհակառակն
կարդալով «սոսաց Իպրահիմն թէ ասէր թա-
քին չեմ, իրաւ ելեր» յստակօրէն կը հաս-
կցուի հետեւեալը. «Իպրահիմ ըսաւ թէ
(ապտալը) կ'ըսէր. «թաքին չեմ». իրաւ
ելաւ», և միեւնոյն ժամանակ կը պարզուի
թէ «կալմայ, կալմայ, պէն քալին տակու-
լեմ» բարբառային ձև մըն է արդի թուր-
քերէն «կե'լմէ, կե'լմէ, պէն թէքին տե-
լի'լիմ» նախադասութեան, որ կը նշանակէ
«մի՛ գար, մի՛ գար (այսինքն՝ իմ վրաս մի՛
յառաջանար) ես թէքին չեմ»:

Հատուածին իմաստը լիովին ըմբռնելու
համար կը մնայ հասկնալ քեֆին բառին ի-
մաստը:

Թեֆին, որ մէկէ աւելի նշանակութիւն-
ներ ունի, կը նշանակէ ախտեղ «առանձին»,
մինակ» պարսկերէն՝ եկրա, ըստ Սամի պէյ
Ֆրաշերիի Գամուռու-ը բիւրֆիին: Թեֆին
սեյիլ կ'ըսուի տունի մը համար որ ոգիներէ
յաճախուած է և կամ մարդու մը համար
որուն մէջ ճիւղեր (գերբնական ոգիներ) կը
բնակին:

Ապտալը կ'ըսէր ուրեմն Իպրահիմին.

— Իմ վրաս մի՛ յարձակիր, որովհետեւ
ես առանձին չեմ. ինձի հետ են ճիւղերը. ես
գերբնական ոյժերով զինուած մարդ մըն եմ:

Բայց Իպրահիմ կը թուի անտախտ հաւատա-
լիքներէ զերմ մէկը եղած ըլլալ որ, առանց
վախնալու ճիւղերէն, սուրի հարուածով մը
կը թոցնէ մօլեգին ապտալին զլուխը:

Երբ Իպրահիմի հետեւորդները ապտա-
լին մարմինը կը խուզարկեն, կը տեսնեն
որ մէջքը գօտիի տեղ մախաղ մը կապած է
որ ոսկեգրամով լիցուն է: Այն ատեն Իպ-
րահիմ սրամտութեամբ կ'ըսէ. «Ապտալը
կ'ըսէր թէ մինակ չէր. իրաւունք ունի ե-
ղեր. չէ ստեր: Ահաւասիկ իր ճիւղերը՝ ոս-
կեգրամները»:

Դարանաղցի, թէն չէ ըսած, բայց
կը թուի մասնակցած ըլլալ այս զսպողա-
կան գործողութեան իրրեւ մէկը այն նախ-
բարածներէն զոր Իպրահիմ իր սակաւաթիւ
զինուորներուն առջեւէն վազցուցած էր
իրենց հօտերուն հետ, յարուցուած փոշիով

խտրելու համար թշնամին: Բայց թէ չորեք-
տասանամեայ Գրիգոր մասնակցած ըլլալ
նաեւ կռիւներուն՝ հաւանական չի թուիր:

Ամէն պարագայի մէջ, եթէ Դարանաղցի
ականատես չէ եղած ապտալին սպանու-
թեան, ականջալուր եղած է զսպումին
պատմութիւններուն, որոնք խորապէս աը-
պաւորուած են իր յիշողութեան վրայ:

Ըմբոստութեան այս դէպքին մասին
Դարանաղցիի հաղորդած տեղեկութիւնը
մեծապէս շահական է իրրեւ առաջին յիշա-
տակութիւնը այն ըմբոստական լայնածա-
ւալ շարժումին, որ ԺՉ. դարուն վերջին
տարիները ծագեցան Փոքր Ասիոյ զանազան
մասերուն մէջ և ծանօթ է ձեւալիւններու
ապստամբութիւն անունով:

Այս փոքրիկ հատուածը մանրանկարն
է ամբողջ շարժումին:

Ապտալ (տեղիւիչ) մը (*) կ'առաջնորդէ
խոնարհ ու տգէտ Քիւրտ զիւղացիները,
այսինքն թրքական տիրապետութեան են-
թակալ ոչ-թուրք ժողովուրդին թշուառ մէկ
մասը կ'առաջարկութեան ներկայացուցիչին՝
«պարոն»ին դէմ, զոր սպաննել և որուն
տունը կողոպտել կուտայ, ապահովաբար
անոր գործած հարստահարութեանց և ա-
պօրինութեանց վրէժը լուծելու և կողո-
պուտով իրենց նւթական վիճակը բարեու-
քելու համար: Քաջալերուած առաջին յա-
ջողութեանէն, ըմբոստները կը համարձակին
յարձակիլ Երզնկայի նման մեծ քաղաքի
մը վրայ, և, երբ չեն յաջողիր զայն գրաւել
և կողոպտել, զայն մասամբ կը հրկիզեն յա-
գեցնելու համար իրենց քինախնդրութիւնը:

Այսպէս, «ձեւալիւններու ապստամբու-
թիւն» կոչուած ըմբոստութիւնները ուրիշ
բան չեն բայց եթէ հարստահարուած ոչ-
թուրք հասարակ ժողովուրդներուն մէկ
մասին ընդգլուցմանը զինքը շահագործող
օտար իշխանութեան դէմ, առաջնորդու-
թեամբ կամ թեւադրութեամբ աղանդաւոր
և մեծ մասամբ չիի կրօնաւորներու: Ուրիշ
խօսքով, անտեսական պատճառներու հե-
տեւանքով ծագած ընկերային շարժումներ՝
կրօնական պատրուակով:

Բարիկ

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ

(*) Ապտալը այստեղ սերիփ կը նշանակէ: Ապ-
տալ բառին վրայ շատ ընդարձակ յօդուած մը ունի
փրոֆ. Ֆուաթ Քէօփրիւլիւ: Հալի էպէսիյաքը Անթի-
լոփէսիսի առաջին և միակ պրակին մէջ:

ՊԱՏՄԱԿԱՆ

ԿԻԼԻԿԵԱՆ ԱՄՐՈՑՆԵՐ

ՀՌՈՍԿԼԱՅԻ ԴՂԵԱԿ

Յովհաննէս Զ. Բարեբարոյ Սսեցի կաթողիկոսի մեռնելով կաթողիկոսական Աթոռը նախապէս որոշուած յաջորդ մը չունէր, վասնզի Պաշլուունեաց տոհմէն եպիսկոպոս չկար և Հեթումեանց տունն ալ պատրաստ եպիսկոպոս մը չունէր։ Թէև Գրիգոր Վրդ. Սկեռացի յարմարագոյն անձն էր իբր գիտուն հոգևորական, բայց Կոստանդին խնամակալին թեկնածուն կը թուէր ըլլալ Կոստանդին Արքեպս. Բարձրբերդցին՝ որ բոլոր իշխաններու և եպիսկոպոսներու միութեամբ կ'ընտրուի կաթողիկոս 1221ին, չուրջ քառասուն տարեկան։ Կոստանդին թէև Մալոխանցի ևս կոչուած է, հաւանաբար Մալոխանի գլուղացի կամ թէ Մալոխանի վանական ըլլալուն համար, բայց պատմութեան մէջ միշտ Բարձրբերդցի կոչուած է, հաւանականաբար նոյն վանքին վանահայրը կամ եպիսկոպոսը գտնուելուն։ Որդին էր Բարեպաշտներ Վահրամի և Ծուշիկի որդնք ունեցան, բացի Կոստանդինէ, Գորգ և Գրիգոր որդիներ և Ծուշանիկ և Վանենի գուտորեր։ Գորգ քահանայ ձեռնադրուած ու նահատակութեամբ կնքած է իր սրբակրօն կեանքը. նոյնպէս քահանայ ձեռնադրուած է Թորոս եղբորորդին։ Բարձրբերդցիի եղբորորդիներ են նոյնպէս Ստեփանոս եպիսկոպոս և հարազատը՝ Գրիգոր, հայրը Մլքի և Ծուշան Բարեպաշտներու։ Կոստանդին կաթողիկոս ունեցած է նաև ուրիշ եղբորորդի մը, Գրիգոր՝ որ զինուորական ծառայութեան մէջ վաղամեռ եղած է։ Հայրենական զինուորական ծառայութեան մէջ կը գտնենք նոյնպէս Թորոս քահանայի որդին, Ստեփանոս, որ ապա Հեթումի պալատի մէջ իշխանական պատուով զինուորական ծառայութեան կը կոչուի։ Կոստանդին խնամակալ, այլ փորձառու, եկեղեցասէր ու հայրենասէր, Բարձրբերդցին կը ներկայացնէ իբր յարմար թեկնածու կաթողիկոսութեան՝ երբ անոր մեր-

ձառոր հարազատները ծառայութեան մէջ էին, հոգևորական և զինուորական ասպարէզներու մէջ և վստահութիւն ներշնչած արքունական շրջանակներուն և ժողովրդական խաւերուն։ Նորընտիրը իշխանական տոհմի մը չպատկանելով մէկտեղ, կը պատկանէր հայրենիքի և եկեղեցիի ծառայողներու հաւատարիմ տոհմի և որ իր յարատե ուսմամբ և արժանիքներով, կրցած էր բարձրանալ եկեղեցական ասպարէզի մէջ, տարիներ յետոյ, իբր զարգացած և պատրաստուած անձ, հայրապետական զահուն վրայ բարձրանալու։

Լեւոն Ա. թագաւորի մահէն (+ 1219) յետոյ չուրջ երկու տարի անցած էր և Կիլիկեան մեր թագաւորութիւնը առանց թագաւորի կը մնար և մանկահասակ Զապէլ իշխանուհիի թագուհիութիւնը արեւելեան ժողովուրդներու ճաշակին և ըմբռնումներուն չէր պատասխաներ, Կիլիկեան աշխարհը շրջապատուած ըլլալով գրեթէ խաւամական երկիրներէն։ Կոստանդին խնամակալ և Կոստանդին կաթողիկոս, ուղեւորով կացութիւնը դարմանել, ժողով կը գումարեն և խնամակալի ազդու ատենաբանութենէն յետոյ դեռատի Զապէլի փեսայ կ'ընտրեն Անտիոքի գուքս՝ Բոյեմոնդոսի երկրորդ որդին 18ամեայ Փիլիպպոսը։ Բոյեմոնդոս Տրիպոլսեցին Լեւոն Ա.ի հակառակորդն էր և Ռուբէնի մրցակիցը, բայց զիւանազիրտական ճամբով և անցեալը մոռնալով, իշխանական խնամութեամբ պէտք էր միացնել Կիլիկիոյ և Անտիոքի արքունիքները, պայմանաւ որ լատին ու կաթոլիկ Փիլիպպոս ընդունէր Հայց. եկեղեցւոյ ուղղափառ դաւանութիւնը, որուն հաւանեցան Փիլիպպոս և ծնողքը, չուտով զրժելու իրենց ուխտին և անհնարին չարիք հասցնելով հայկական արքունիքին և ազգին։ Հայոց կողմէ անկեղծ և բարեացակամ կերպով գոյացած այս խնամութիւնը շատ կարճ տևեց զժրախտաբար ու Փիլիպպոս չուտով գուքս տուաւ իր գոյնը, արքունի գանձը և Զապէլի հօր՝ Լեւոն Ա.ի պատուական թագը ուրիշ իրեղէններու հետ Անտիոք փախցուց ու երբ ինքն ալ ութնամեայ Զապէլի հետ կը փախչէր, հայ իշխաններ ետեւէն կը հասնին, կը բռնեն ու թել Համառունի մէջ կը բանտարկեն ու զահաւուրկ կ'ընեն։ Փիլիպպոս կը մեռնի բան-

տին մէջ, Ձապէլ կը ճանչցուի օրինաւոր թագաժառանգ, միշտ կոստանդին իշխանի խնամակալութեամբ: Ժողովուրդ, արքունիք, կաթողիկոսարան ու բանակ հաւատարապէս կը զայրանան Փիլիպպոսի և հօրը արարքին ու արդարօրէն կը նորոգեն Լեւոնի օրով լատիններուն դէմ բացուած հալածանքը ու վտարելով Տարսոնի և Մամեստիոյ լատին եպիսկոպոսները: Գահազուրկ Փիլիպպոսի բանտին մէջ մեռնելէն յետոյ, Ձապէլ ազատ կը կացուցուէր վերամուսնութեան: Բովանդակ ազգը տեսած էր թէ այնքան բարի մտադրութեամբ Անտիոքի հետ կայացած խնամութիւնը օրքան տղատալի եղաւ: Բողոքին փափաքն էր հայկական գահուն վրայ տեսնել տոհմիկ արքայազուններ ու կաթողիկոս, խնամակալ և մեծամեծներ, կը հաւանին Ձապէլը կնութեան տալ կոստանդին խնամակալի պայազատներէն մէկուն և նկատի առնելով Ձապէլի տարիքը՝ կ'ընտրեն խնամակալին կրտսեր որդին, 11ամեայ Հեթումը և պաւկադրութեան ու թագադրութեան կրկնակ հանդէսները փառաւորապէս կը կատարուին Տարսոնի մէջ, 1226 Յունիս 7ին, նախագահութեամբ կաթողիկոսին, ի ներկայութեան խնամակալին, եպիսկոպոս և իշխաններու և ազգային ընդհանուր ուրախութեան մէջ:

Բարձրբերդցի Հոռմկլայ վերադարձած, նուիրուած էր իր հոգեւոր պաշտօնի պարտաւորութիւններուն, շարունակ հետեւելով Սոյ աքըունական դրութեան: Հազիւ տասը տարի տեղդ հանդարտ ու ամէն մարդի վրայ արդիւնաւոր շրջան մը բոլորուած ըլլալուն, ահա արեւելքէն դէպի Փոքր Ասիոյ խորերը յառաջանալ կը սկսին թաթարներու անթիւ բանակները, իրենց արշաւանքի ճամբաներուն վրայ, Լեհաստանէն մինչև Հնդկաստան, աւեր ու սարսափ տարածելով ու նոյն աւերները գործելով Հայաստանի մէջ ևս ու տակաւ սպառնալով Կիլիկիան աշխարհին: Հեթում և իր հայրը հեռատեսութիւնը կ'ունենան բարեկամական յարաբերութիւններ մշակելու թաթարներուն հետ, հեռացնելով Կիլիկիա արշաւելու և աւերելու անմիջական վտանգը: Համեմատաբար խաղաղութեան այս շրջանին է որ Բարձրբերդցին ներքին իր բարեօք յարաբերութեանց հետ բարեկա-

մական և փոխադարձ յարգանքի յարաբերութիւններ կը մշակէ նաև քրիստոնեայ եկեղեցիներու, ինչպէս Ասորոց պատրիարքին, Հոռմի պապերուն և Յունաց երայմանոս պատրիարքի հետ, ամէն առիթով պահպանելով Հայց. եկեղեցւոյ նուիրապետական անկախութիւնն ու դաւանաբանական ուղղութիւնը: Նման անկեղծ յարաբերութիւններու հետեանք էր անշուշտ Ասորոց պատրիարքի հետ կաթողիկոսին երուսաղէմ այցելութիւնը, ուխտաւորութեամբ 1238 ին:

Բարձրբերդցի օժտուած էր բարձր հայրենասիրութեամբ: Գարեգին Ա. կաթողիկոս (Հայց. եկեղեցի, Նիւ Եօքս, 1942, էջ 93) իրաւամբ կը գրէ որ մեր ազգային և եկեղեցական պատմութեան մէջ ուշագրաւ դէմք է Բարձրբերդցին՝ որ եկեղեցական ուրիշ բարեկարգութեանց կարգին, իրր արուեստասէր ու գիտնական վարդապետ, իր հոգածութեան առարկայ կ'ընէ ո՛չ միայն եկեղեցական գիտութիւնն ու արուեստը, Կիլիկիոյ և բովանդակ Հայաստանի մէջ, յանձնարարելով բոլոր եպիսկոպոսներուն ու անոնց հրամայելով որ արուեստաւորենբուն և գիտուններուն Ս. Գիրք գրել եւ ծագկել տան, այլ և իրր արդիւնք իր հեզահամբոյր բնաւորութեան եւ ուղղութեան, իր շուրջը կը հաւաքէ արժանաւոր և գիտնական վարդապետներ, կենդանի պահելու համար իր պաշտպանութեան և հոգածութեան առարկան դարձնելով Հայց. եկեղեցին, զայն բարեկարգելով ու բարեզարդելով ու մղում տալով հայկական գրչութեան և մանրանկարչութեան չքնաղ արուեստներուն:

Մասնաւոր յիշատակութեան արժանի է, յատկապէս, Վարդան Վրդ. Արեւելցիի ներկայութիւնը Հոռմկլայի մէջ, ամբողջ հինգ տարի 1241էն մինչև 1245, երբ Մխիթար Գօշի և Յովհաննէս Վանական Վրդ. ի այս գիտնական աշակերտը, ըստ Կիրակոս պատմիչի, երուսաղէմ գացած էր «աղօթականութեան ազագաւ» ու վերադարձի ճամբուն վրայ Սոյ մէջ հանդիպած էր Հեթում թագաւորին և իր եղբայրներուն հետ և այն տեղէն մեկնած Հոռմկլայ, տեսակցելու համար կոստանդին կաթողիկոսին հետ որ զինքը կ'ընդունէր մեծ ուրախութեամբ և իր մօտ կը պահէր ամբողջ հինգ

տարի: Վարդան Վրդ. ու Վարենկան» բու-
լոր վարդապետներն էին որ հիւրասիրուած
էին Հոռմկլայի Դղեակին մէջ: Բարեպա-
տեհ էր, արդարեւ, Վարդան Վրդ. ի ներ-
կայութիւնը հայրապետանոցի մէջ, երբ
կաթողիկոսը իրեն պէս հաւատարիմ եւ
գիտնական վարդապետի մը հետ միտքերու
փոխանակութեամբ կրնար ազգին մէջ տա-
րիններէ ի վեր զիտած ապօրինութիւննե-
րուն դարման մը տանելու մասին ծրագրել
ու համապատասխան միջոցները գործա-
դրել: Ու ժամանակի զեղծումները համ-
բըւած ատեն կը յիշուին՝ մերձաւորներու
հետ ամուսնութիւն, ամուսնաթողութիւն,
ապօրինի կենակցութիւն, պահքերու ան-
զգուշութիւն, հեթանոսական կենցաղ եւ
որ մեծագոյնն է, անարժաններու ձեռնա-
դրութիւնները՝ կաշառով, ինչպէս նաեւ
ձեռնադրութիւններ սղէտներու եւ ման-
կահասակներու եւ եկեղեցականներու խառ-
նակեցութիւն: Այս զեղծումներուն դար-
ման մը հոգալու համար, կաթողիկոս ու
Վարդան Վրդ., Հայրապետանոցին եպիսկո-
պոսներով ու վարդապետներով, 1243 ին
Հոռմկլայէն կուգան Սիւ ու կաթողիկոսի ու
Հեթումի փոխադարձ համաձայնութեամբ
ժողովի կը հրաւիրուին թեմական եպիսկո-
պոսներ, վանահայրներ, իշխաններ եւ. եւ
մատնանշուած զեղծումներու հանդէպ կա-
նոններ կը սահմանեն ու կը ստորագրեն:

Սիւի գումարումը ազգային կատարեալ
ժողով մը չկրցաւ ըլլալ, որովհետեւ միայն
Կիլիկիոյ ներկայացուցիչներով կազմուե-
ցաւ եւ Հայաստանի եւ Փոքր Ասիոյ եպիս-
կոպոսներուն եւ վարդապետներուն եւ ո՛չ
իսկ հրաւէր զրկուեցաւ: Կոստանդին կա-
թողիկոս մտադիր էր անձամբ երթալ արեւ-
ելեան գաւառները: Սիւի ժողովին որո-
շումներուն կատարեալ ազգային կանոնի
ոյժը տալու ընդհանուր համաձայնութեամբ,
բայց իր փափաքը չկրցաւ լրացնել ծերու-
թեան եւ աննպաստ ժամանակի պատճա-
ռով, որով երեք տարի սպասելէ յետոյ
Վարդան վարդապետը ճամբայ հանեց, որ-
պէսզի չըջնէ յետոյ Փոքր Ասիոյ եւ Հա-
յաստանի թեմերը, եպիսկոպոս եւ վանա-
հայրերու համաձայնութեան ստորագրու-
թիւնը առնէ եւ բոլորը հաւաքելով կաթո-
ղիկոսին բերէ: Վարդան Վրդ. իր հետե-
ւորդներով կը մեկնի Արեւելք, իբրեւ կա-

թողիկոսական նուիրակ: Սոսյ ժողովին
կանոնները դաւանական գլխաւոր նիւթե-
րու շուրջ չեն դառնար եւ ատենագրութեանց
պատճէնն ալ կորսուած է: Ամբողջը 25
զուխներէ բաղկացած ըլլալով, կան բա-
րոյական, զիջողական եւ քահանայից յա-
տուկ զուխներ:

Բարձրերդցիին առաջարկները կամ
Սիւի ժողովին որոշումները լաւ ընդունե-
լութեան չարժանացան ընդհանրապէս հրա-
մանի մը ձեւը կրելուն եւ հոն զիտուած
լատինամէտ զիջողութեանց պատճառով:
Կը ստորագրեն տասնի չափ ժողովական-
ներ միայն եւ արդիւնքը զոհացուցիչ չը
գտնուելուն, Վարդան Վրդ. հաւանութեան
զիրը անձամբ չի բերեր Հոռմկլայ, այլ կը
զրկէ իր հետեւորդներով ու ինք կ'առանձ-
նանայ Ս. Անդրէասի վանքը: Բարձրերդցի
զոհ մնաց ձեռք բերուած չափաւոր ար-
դիւնքէն ու հազիւ ստացած Վարդան Վրդ. է
զրկուած գրեթէ, փութաց իր կողմէ հա-
րուստ ընծաներ զրկել Արեւելքի եկեղեցի-
ներուն, գլխաւորաբար անուանի վանքե-
րուն, Թէոդոս Վրդ. ի ձեռքով: Բարձր-
երդցիի այս կարգադրութիւնը բացառիկ
երևոյթ է ինքնին եւ արժանի առանձին ու-
շագրութեան: Հայաստանի կաթողիկոսա-
կան ու արքունական կեդրոնը Կիլիկիա
փոխադրուած էր շուրջ երկու դարէ ի վեր,
բայց արեւելեան նահանգներու կարեւոր
վանքերը կը շարունակէին իրենց նպաստը
բերել ազգային մշակոյթին, ժողովրդային
ընդարձակ բազմութիւններ շարունակելով
պահել իրենց նախնեաց հաւատքին ու ա-
ւանդութեանց վրայ եւ կարեւոր բոլոր թե-
մերուն տալով նոյն եկեղեցական ու ազ-
գային ուղղութեամբ տոգորուած գիտնա-
կան եպիսկոպոս ու վանահայրներ: Բաց
աստի, Հայաստանի գլխաւոր վանքերը
նշանաւոր ուխտատեղիներ էին եւ առար-
կայ հայ ժողովուրդի անմար բարեպաշ-
տութեան. պէտք էր զանոնք պայծառ պա-
հել, գրաւել ու Կոստանդին կաթողիկոս
այդ ուղղութեամբ էր որ շարժեցաւ, իր
անձնական ճոխ նուէրներով զարդարելով
Հայաստանի վանքերու եկեղեցիները:

Բարձրերդցի իր մասնաւոր ուշադրու-
թեան առարկայ ըրաւ Արտագու Ս. Թա-
ղէոսի վանքը՝ որ թուրքերէն եւ թաթար-
ներէն աւերուած էր: Կաթողիկոսը ո՛չ

միայն շատ ոսկի զրկեց վանքի գաւթին շինութեանը, այլ և շրջաբերական գիրեր զրկեց նպաստ հաւաքելու, վիճակը ընդարձակեց և Արտաղու աթոռը իր նախկին պայծառութեան վերադարձուց որ ապա եկեղեցւոյ գործառնութեանց մէջ նշանաւոր դեր պիտի ունենար:

Այս միջոցին էր որ Հեթում թագաւոր ալ իր ուշադրութիւնը դարձուցած էր արեւելեան գաւառներուն վրայ՝ որոնց բախտը այլևս Թաթարներու կամքէն կախումն ունէր, իր թագաւորութիւնը ամրացնելու և ներքին գաւառներու հայերը բարօրութեան մէջ պահելու մտադրութեամբ Թաթարներու հետ բարեկամութիւն մշակելով, մինչև իսկ իր Սմրատ սպարապետ եղբայրը Սմրդանտ զրկելով:

Տեսանք թէ Հայց. եկեղեցիի իբր հայրապետ ո՛րքան նախանձախնդիր էր անոր նուիրապետական անկախութեանն ու դաւանաբանական ուղղութեանը, տեսանք նաև թէ քրիստոնէական սգիով ինչպէս գիտէր յարաբերիլ արեւելեան և արեմտեան եկեղեցիներու հետ և յարգանք պարտադրել անոնց հայրապետներուն ու նկատել այն համերաշխ գործակցութիւնը որ միշտ տիրապետող մնաց, սկիզբէն մինչև վերջը հայ արքունիքին և Հայց. եկեղեցիի միջև, Կոստանդին խնամակալ ու ապա թագաւորահօր, յետոյ Հեթում թագաւորի ու Բարձրբերդցիի շնորհիւ, իբր անկեղծ հայրենասէր և հեռատես առաջնորդներու: Այսքանն իսկ բաւական պիտի ըլլար Բարձրբերդցիին զնելու Հայց. եկեղեցիի մեծ կաթողիկոսներու կարգին, հոգ չէ թէ յաւր ետեւէն զբական երկասիրութիւն մը թողած ըլլար իբր գերազանց հանճարի մը առհաւատչեալն, բայց Հռոմկլայի հայրապետանոցը զրչութեան և մանրանկարչութեան արուեստներու այնպիսի դպրոցի մը վերածուեցաւ մեծագործ կաթողիկոսի անմիջական հովանաւորութեամբ՝ որ ո՛չ միայն Հռոմկլան տուաւ իր գեղեցկագոյն գործերը, այլ և Դրաղարկ և ասոր հետ կապուած Գոների և Ակների դպրոցները, ժ.Գ. դարու երկրորդ քառորդէն յետոյ դարձան ռահվիրաները հայկական զրչութեան և մանրանկարչութեան ոսկեդարին՝ որուն արժանաւոր հովանաւորողն ու մեկենասը հանդիսացաւ Կոստանդին կաթողիկոս, թագաւորով և ասոր եղբայրներով: Բարձրբերդցի իր այս հանգամանքով ալ բոլորովին բացառիկ դէմք է մեր եկեղեցական

պատմութեան մէջ և իր հովանաւորութեամբ և նիւթական լայն ձեռնտուութեամբ մեզի հասած զրչութեան և մանրանկարչութեան արդիւնքներու մասին պիտի խօսինք իր կարգին:

Բարձրբերդցի կը վախճանի 1267 Ապրիլ 9ին, ամբողջ 47 տարի մնալով հայրապետական աթոռին վրայ. իրմէ աւելի երկարատե հայրապետութիւն վարողներ եղան միայն Գրիգոր Պահլաւունի (1113-1166) և Սահակ Պարթե (387-436): Որչափ որ ալ Կոստանդինի հայրապետութեան առաջին ժամանակները համեմատաբար խաղաղ էին, սակայն վտանգները անպակաս եղան և զժուարթութիւնները շարունակեցին գոյութիւն ունենալ, այնպէս որ իրաւամբ գրուած է իրեն համար թէ «կրակից և վշտակից և սգակից եղաւ ազգիս ի մեղսաբեր և ի ցտամնահար զարուս», այլ շատ աւելի դառն եղաւ վերջին տարին, Փընտուխտարի արշաւանքովը և Մառիի ճակատամարտին ձախողութեամբը որոնք մօտեցուցին իր մահը և տագնապ պատճառեցին իրեն:

Բարձրբերդցի իր զարմանահրաշ վարքով առհասարակ կը հիացնէր ամէնքը, այն աստիճան որ իր անհամեմատ վարքի մաքրութեան մասին օտարներ իսկ կը վեկայեն, վասնզի ան բարեաց աղբիւր էր և ամէն ոք կ'օգտուէր իր առատաձեռնութենէն: Որբերու հայր էր ու կը հոգար աղքատները: Առաքելական թուղթերով և կանոնական հրահանգներով բոլոր եկեղեցիներուն պատուէրներ կը զրկէր: Ու այս բոլոր բարեմասնութիւններէն աւելի աստուածասէր հոգեւորական էր, հաւատացեալ ու աղօթանուէր: Բնական էր որ այսքան բարձր բարեմասնութիւններով օժտուած հայրապետի մը մահը խոր վիշտ պատճառէր բովանդակ ազգին:

Մատենագրութիւն՝

ա. — Ազգապատում:

բ. — Սխուման:

գ. — Կոստանդին Ա. Կարողիկոս, Հայաստանեայց եկեղեցի, Նիւ Նորք, 1942, էջ 85:

դ. — Արսւազդ Արք. Յուցակ երուսաղէմի, Ա. Հար. 1948:

ԱՐՏԱԽԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Շարունակելի)

ԵՂԻՇԷ ՊԱՏՄԱԳԻՐ

ԵՒ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Փ.Ա.

Ուրացողութեան գոյժը. — Անգղի փորձը եւ դիմադրութիւնը. — Բռնութեամբ կաշարուած փորձին անյաջողութիւնը. — Հայերու դիմումը Յունաց կայսեր օգնութիւն խնդրելու. — Վարդանի դէպի Յունական Հայաստան մեկնումը եւ Վասակի ջանքով վերադարձը. — Ուխտապաններու ջանքերը. — Աղուանից պատերազմը եւ Հայոց բանակին ցոյց տուած քաջագործութիւնը. — Վասակի դերը եւ կատարած երկդիմի ընթացքը:

Տիգրանի արքունիքին մէջ, Յագկերաթ, արքային առջև Հայ նախարարներուն կողմէն, իբրեւ նուազագոյն չարիք ընդունուած կեղծ ուրացողութեան գոյժը բռնականաբար կայծակի արագութեամբ լսուեցաւ Հայաստանի մէջ: Ի լուր ուրացողութեան այս գոյժին, եկեղեցականութիւնն և ժողովուրդ մէկ սիրտ և մէկ հոգի ոտքի կանգնեցան, բոլորը մէկ ցնցուեցան և ալալեցան: Եպիսկոպոսներ, քահանաներ, երէցներ քարոզութեան, քաջալերութեան և յորդորանքի լծուեցան, ժողովուրդը լուսաբանեցին և յորդորեցին ի զին ամէն զոհողութեանց դիմադրելու: Կրօնքի և ազգութեան, յեղափոխութեան և ընդդիմութեան սուրբ դրօշակը Հայոց կողմէն պարզուեցաւ ընդդէմ Պարսից, որոշեցին կռուիլ ուրացողներու և պարսիկներու դէմ:

Եղիշէի համաձայն, և ըստ ծրագրին, Հայաստանի մէջ գործի ձեռնարկելու ժամանակը որոշուած էր արդէն, «կէտ եղեալ զժամանակն, զամիսն վեցերորդ», իսկ Հայաստանը ամբողջովին կրակապաշտ դարձնելու համար, տարուան մը ժամանակամիջոց տրուած էր, այսինքն՝ «մինչև ի նաւասարդէ մինչև նաւասարդ» օրպէսզի միանգամընդմիշտ «բարձցին կարգ եկեղեցւոյ, փակեցցին և կնքեցցին դրունք սուրբ տաճարաց»:

Հայաստանը կրակապաշտ դարձնելու

գործին մէջ, Տիգրանի մէջ նախարարներու կեղծ ուրացողութենէն սկսեալ, երեք ամիսէն աւելի միջոց մը տրուած կ'ըլլար տեղւոյն մէջ գործնական ձեռնարկներ կատարելու և գործը յաջողութեամբ վերջացնելու համար: Կրօնափոխութեան համար նշանակուած մոզերը և իրենց հետեւողները «յամսեանն չորրորդի եկին հասին յաշխարհն Հայոց» և բանակեցան Մագկոտն գաւառի Զիրաւ այժմու Տիատին դաշտին վրայ: Զիրաւի բանակատեղին, Անգղի զիւղաքաղաքին մօտը կը գտնուէր, որ ամբողջն բերդ մըն էր, ըստ ոմանց այժմու Դարգալըխի կը համապատասխանէր: Եղիշէի բացատրութեամբ, չորրորդ ամսուան սկիզբը՝ Յունիս ամսուան 10ին կ'իյնար, որով «յամսեանն չորրորդին ալ նոյն ամսըւան սկսելուն վրայ կարելի է ընդունիլ:

Նախարարներուն ուրացողութեան գոյժը, Հայաստան հասած էր արդէն: Տիգրանի մէջ գտնուող քրիստոնեայ գունդերը սկսան Հայոց տկարամտութիւնը իրենց երեսին զարնել: Անոնք՝ ուրացող նախարարները յանդիմանեցին և կշտամբեցին, իսկ քահանաներն ալ զամահրեցին: Անոնք կ'ըսէին. «Կոյրերուն ետեւէն երթալով՝ կոյր պիտի դառնաք», և հեզնանքով ուրացողներուն կ'ըսէին. «Ե՛րբ ուսանիցիք զբազմաթիւ անուանս աստուածոց նոցա, այն որ չիք ուրեք ի միջի և ոչ մի», հեզնանքէն վերջ անոնք երկինքին սուգ զգեցած ըլլալը կը յայտարարէին և կ'ըսէին. «Զեր վրայ երկինքը սուգ առաւ, և երկիրն ալ տրտմեցաւ ձեր ոտքերուն տակ: Իսկ հրեշտակներն ալ վերը ձեզի բարկացած են...»:

Բովանդակ Պարսկական - Հայաստանը զղրդեցաւ և կազմակերպուեցաւ: Հայերը՝ մէկ սիրտ և մէկ հոգի եղած, հոգեւոր զինուորներ եղան ի Քրիստոս, Քրիստոնէութիւնը և իրենց լոյս հաւատքը պաշտպանելու ի զին ամէն զոհողութեանց, իմէ պէտք տեսնուէր նոյն իսկ իրենց արեան զինովը... Ամէն անոնք որ ուխտ կ'ընէին, պէտք է հաստատ և անշարժ մնային, իսկ անոնք որ ուխտագանց ըլլային, պէտք էր որ պատժուէին անպայման:

Օրէնքը կամ կրօնքը միայն իրենց համար թաղաւոր կը ճանչնային «Օրէնք աստուածային կացցեն թաղաւոր ի վերայ ամենայնի»: Ուրեմն կը տեսնուի թէ, ա-

մենուրեք, Հայերը սկսան զինուիլ։ Այս շարժման գլխավոր պարագուիւրը կը ներկայանար Ղեւոնդ Վանանդեցին, որ Սահակի օրէն սկսեալ Բագրեւանդի մէջ հաստատուած էր իբրեւ անոր Տեղապահ (Արմ. 81), և ինքն էր գլխավոր հերոսը և կազմակերպիչը որ ոգի ի բոլին պիտի զիմադրէր կարաւանին։ Պարսկաստանէն դէպի Հայաստան հասած կարաւանը, կամ մոգերու բազմութիւնը, ամիսի մը չափ դադար և հանգիստ ըրաւ Մարզիպան դաշտին մէջ։ Թերեւս մոգերու բազմութիւնը կը սպասէին որ Տիրգրոնէն Հայաստան դարձող նախարարները, որոնք՝ արքունիքին մէջ և Յագկերտ արքային ներկայութեանը Պարսից դէնը պաշտօնապէս ընդունած էին, կարգ մը ձեռնարկներ և գործեր ընէին, բայց ի դուր...։ Նախարարները Հայաստանի ամէն կողմերը կը ցրուին, և մոգերը ի տես այս երկդիմի կացութեան՝ ապշած ու վարմացած՝ դէպքերու ընթացքին հետեւելու ստիպողականութեան առջեւ կը գտնուէին։

Հայոց կարաւանը, մոգերու բազմութեամբը չորրորդ ամսուան մէջ (450 նոյեմբեր) Հայաստան հասաւ և սպասողական դիրք մը բռնեց։ Մոգերը այս սպասողական դիրքին մէջ՝ ճարահատ, իրենց հասնէին 25 օր վերջը, իրենց մոգպետին առաջնորդութեամբը ու մասնաւոր դիտումով մը, Կիրակի օր մը, յարձակում ըրին Անգղ գիւղաքաղաքի եկեղեցիին վրայ։

Կիրակին, այդ տարին Յուլիս ամսուան 2ին կ'իյնար։ Ղեւոնդ երէց, եկեղեցականներ և ժողովուրդ, օգնականներով և հետեւորդներով միացած՝ դէմ դրին այդ ոտընձգութեան։ Փայտերով և քարերով յարձակեցան՝ յարձակողներուն վրայ, «գլխաւորուն մոգացն և մոգպետին ջարդեցին», զէնքով ալ զիմադրութեան ստիպուեցան, այնպէս որ, մոգպետը հազիւ կրցաւ մահուանէ ազատիլ և իր տեղը դնաց յուղուած և ուշակորոյս վիճակով։ Մոգպետը այս դէպքէն վերջը, մտածեց ետ կենալ այս ձեռնարկէն, նկատելով որ իրենք անյաջողութեան պիտի մատնուէին։ Անգղի զիմադրութիւնը՝ պարսիկ մոգերուն վրայ շատ գէշ տպաւորութիւն ձգեց։ Մոգերը ասդին անդին ցրուեցան և սկսան խորհրդակցիլ իրենց հետեւելիք ուղղութեանը մասին։ Կ'երեւի թէ, Անգղի զիմադրութեան շար-

ժումէն ամենէն շատ ազդուողն եղած էր մոգպետը. «Բագում անգամ աղաչէր զօգնականն իւր, զի ի մահուանէ կարասցեն զնա ապրեցուցանել, և ողջանգամ անդէն յարքունիս հասուցանել» (Գ. Յեզ. 107)։

Մոգպետը դառնութեամբ և զայրոյթով կ'ըսէ. «Եթէ նոյնիսկ մեր աստուածներն ալ մեզի օգնութեան գան, կարելի պիտի չըլլայ Հայերուն մեր կրօնը ընդունիլ տալ»։ Ու կը շարունակէ. «Հայերը այնպիսի մարդիկ են որ, ոչ տանջանքներէն կը վախնան, և ոչ հալածանքէն կ'ընկճուին, և որ բոլոր չարիքներուն չարն է՝ մահը կենքէն աւելի կը նախընտրեն, այս պայմաններուն մէջ ո՞վ կրնայ անոնց զիմադրուել»։

Մոգպետը՝ Մարգապանը խորհրդակցութեան հրաւիրեց և անոր յայտնեց թէ ինք լսած է որ ժամանակին Շապուհ արքայից արքան ալ քրիստոնեաները կրօնափոխ ընելու ձեռնարկած էր, և անոնց դէմ ամէն տեսակ բռնութիւններ և խտրութիւններ ի գործ դրած, սակայն հակառակ այս հալածանքին, տեսնելով որ Քրիստոնէութիւնը օրէ օր աւելի կը տարածուի, հալածանքը դադրեցուցած էր և անոնց ազատութիւն շնորհած։ Հիմակ ալ, նոյնպէս ինքը այդպէս կը կարծէ և այդ գործը անհնար և անկարելի կը տեսնէ, ինչպէս որ Մարգապանը այս իրողութիւնը զիտցած պէտք է ըլլայ։ Ուստի ինքը յանձն կ'առնէր Յագկերտին և Մոգպետան Մոգպետին գրեւուցոյց տալով թէ անհնար է գործը բռնութեամբ յաջողցնել, պէտք է որ հրաման տրուէր կրօնի ազատութեան մասին, ինքն ալ իր կողմէն կը յորդորէր որ Մարգապան ալ նոյն մտօք պէտք եղածները տեղեկացնէր Յագկերտին և պարսից արքունիք։

Մոգպետին համաձայն ամէն ոք, ըլլայ մոգ, զանգիկ, հրեայ և քրիստոնեայ պէտք է որ իր կրօնքին մէջ ազատ ըլլայ։ Այս խնդրին առնչութեամբ, Վասակ բոլորովին տարբեր և երկդիմի ընթացք մը ունեցաւ, և ցոյց տուաւ իր հոգեբանութիւնը. ան մոգպետը փոխանակ յուսալքելու՝ ընդհակառակը զայն քաջալերեց և յորդորեց, որ Աղուանից կողմը գտնուող պարսկական տասնհազարի բանակը Հայաստան բերել, ինքն ալ իր կողմէն իր սեպհական Սիւնեաց գունդերը բերաւ «ի թիկունս օգնականութեան մոգաց եւ մոգպետին» (Գ.

Յեղ. 115): Պէտք է ի մտի ունենալ թէ, մոգերուն հետ Հայաստան եկած կեղծուրաց նախարարները, Ծաղկոտն գաշտին մէջ չը մնացին, ամէն ոք իր տեղը գնաց, Փարպեցիին բացատրութեամբը հաստատեալ բազում անգամ և ի ճանապարհին զնոյն ուխտ երգման աւետարանին սրբոյ, հրաժարեալք և միմեանց, զնացին յւերաքանչիւր աշխարհս» (Փար. 55):

Քաջն Վարդան զօրավարն ալ, իր կողմէն խոհեմութեամբ և զգուշութեամբ գէպքերուն կը հետեւէր և Առտնին ժամերգութիւնները կը կատարէր ու կը զգուշանար «միաբանութեամբ ամենայն Հայոցք երթալ յեկեղեցի» (Փար. 59): Յովսէփի կաթողիկոս, Վասակ Մարգպան, Ներշապուհ Արծրունի և Վարդան Հայոց սպարապետը, համաձայն հաւանութեամբ Ատոմ Գնունին գէպի Բիւզանդիոն զրկեցին Թէոդոս կայսրին տեղեկութիւն տալու և օգնութիւն խնդրելու Բիւզանդիոնէն:

Ահաւասիկ հոս կը դնենք այդ հրովարտակին պատճենը. «Յովսէփի եպիսկոպոս, բազում եպիսկոպոսակցօք լիովք և ամենայն զօրօք Հայոց, Վասակ մարգպան և Ներշապուհ Ռաբոսեան, հանդերձ սպարապետաւ և ամենայն մեծամեծ նախարարօքս՝ առ մեծանունդ Թէոդոս կայսր, բազմացի ողջոյն մեր առ քեզ և ամենայն զօրաց քոց, որ խաղաղասէր մարդասիրութեամբ ձերով տիրէք ծովու և ցամաքի, և չիք ոք յերկրաւորացս որ ձերում անարգել տէրութեանդ ընդգէմ դառնայցէ: Որպէս մեք իսկ ունիմք զանսուտ յիշատակարանս զառաքինի նախնեացն ձերոց. ունելով զԵւրովպէ՝ անցին և տիրեցին և Ասիացոց կողմանցն ի սահմանացն Սևրաց մինչև ի կողմանս Գաղերովնի, և ոչ ոք գտաւ ստամբակեալ և ելանել ըստ ձեռն նոցա: Եւ յայնչափ մեծ իշխանութեան՝ դաստակերտ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանէին: Վասն որոյ և նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, որ ի տղայութեան փախուցեալ ի հայրսպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց՝ ապրեալ սնաւ յերկրիդ Յունաց, և ի ձէնջ թագաւորեալ՝ տիրէր հայրենի աշխարհիս, սոյնպէս և զհաւատսն որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռովմայ, որ լուսաւորեաց զխաւարային կող-

մանս հիւսիսոյ. զոր և այժմ կամին ի մէնջ կորզել հանել խաւարասէր որդիքն արնեւից:

Եւ մեք ի ձեր քաջութիւն արութեանդ խիզախեալ, էր ինչ՝ որ ընդգէմ դարձաք նոցա հրամանացս, և բազում այն է՝ որ արդառաջի պատրաստեալ եմք: Ընտրեցաք զմահ աստուած պաշտութեամբ քան զկեանս ուրացութեամբ. եթէ զուք ևս ի ձեռն առջիք զմեզ, ահա կրկին կենաց զիպեցաք և ոչ մի անգամ մահու: Եւ եթէ սակաւիկ մի հեղգայք, զուցէ բազում և այլ աշխարհաց հասանիցէ տապ քոցոյ սորա» (Պ. Յեղ. 132-134):

Հաղիւ թէ Ատոմ Գնունի նախարարը Բիւզանդիոն հասած էր և Հայոց զիրը յանձնուած Թէոդոս կայսեր, որ իր կարգին արքունական ժողովին նկատառութեան յանձնեց. զժրախտաբար սակայն, կայսրը վախճանեցաւ և զործը անյաջողութեան մատնուեցաւ. «Կարի չար խափան լինէր զործոյն օգնականութեան»: Պատմութենէն զիտենք թէ, Թէոդոս Բ. կայսրը 450 տարւոյ Յուլիս 28ին մեռաւ ձիէն վար իյնալով, և ոչ թէ երկար հիւանդութեամբ, այնպէս որ մինչև մահուան օրը կրնար Հայոց պատգամաւորին հետ տեսնուիլ: Ամէն պարագայի տակ, Հայերը շտապած էին Բիւզանդիոնի կայսրութեան օգնութեան զիմելու:

Դէպի Բիւզանդիոն Հայոց համար Յոյններէն օգնութիւն զիմելու պատգամաւորը՝ Ատոմ Գնունի նախարարը, մին էր Արտաշատի ժողովին մասնակցողներէն և տարերէր է Ատոմեան նահատակներու առաջնորդէն:

Անդգի զիմադրութեան գէպքը, Վասակ Սիւնիին բռնած երկզիմի ընթացքը շատ վատ տպաւորութիւն գործեցին բոլորին և ի մասնաւորի Քաջն Վարդան սպարապետին վրայ: Քաջն Վարդան, յուսահատ և յուսարեկ վիճակ մը ստացաւ, խորհեցաւ թէ՝ Հայոց կողմէն կատարուելիք ընդդիմութիւնը կարելի պիտի չըլլայ իրականացնել, ուստի որոշեց Պարսկական-Հայաստանէն հեռանալ: Իրեն համամիտ և համաձայն գտնուեցան՝ իր Հմայեակ Մամիկոնեան եղբայրը, ինչպէս նաև Մամիկոնեաններու զերդաստանը ամբողջութեամբ: Ուստի պատրաստութիւններ տեսան և քաջամարտիկ ու քաջահաւատ Մամիկոնեանը

ազգատունի մեջն քրմի միասին Տարօնէն մեկնեցան, Տուարծատափի և Բասենի գաւառներու ճամբով կարին ապաւինելու և Յունական-Հայաստան հաստատուելու մտադրութեամբ (Փար. 57):

Քաջն Վարդան Մամիկոնեան ապարապետին և իր գերդաստանին խմբովին հեռանալը, քնականաբար Վասակ Սիւնիին գործին չեկաւ, մանաւանդ ինքը իբրեւ զիւլանագէտ և փորձառու անձ՝ հասկցաւ թէ Հայոց ապարապետին անդարձ մեկնումը իրեն պատճառաւ տեղի կ'ունենար, և թէ անոր հեռանալը վատ հետեւանքներ կըրնար ունենալ: Ուստի՝ առանց ժամանակ կորսնցնելու, իր մօտ հրաւիրեց ազգեցիկ և հեղինակաւոր եպիսկոպոսներ ու նախարարներ, և բոլորին ներկայութեամբ՝ իր քրիստոնէական հաւատարմութիւնը և ուխտը կրկնեց ու անմիջապէս նամակ գրեց Քաջն Վարդանին, և Ս. Աւետարան մըն ալ բերել տալով՝ երգումով կնքեց և ուրիշներուն ալ կնքել տուաւ: Նամակը՝ պատգամաւորներու խումբով մը ղրկեց, որ Քաջն Վարդանը և իր պարագաները համոզեն ու ետ դարձնեն: Վասակի պատգամաւորներն եղան, Ղեւոնդ Վանանդեցի, Երեմիայ Վաղարշապատցի և Խորէն Մրեհանցի երէցները, Արշաւիր Արշարունի, Հմայեակ Դիմաքսեան և Գաղրիկ Արեղեան նախարարները:

Ասանք նամակը և Ս. Աւետարանը առնելով՝ Քաջն Վարդանին ետեւէն փութացին ղէպի Արամանայ գիւղը, որ Բագրեւանդի, Բասենի և Տուարծատափ գաւառներու սահմանին վրայ կը գտնուէր: Վասակի գիրն ու երգումը, պատգամաւորներուն աղաչանքն ու աղերսը՝ զօրաւոր հակազդեցութիւն գործեցին Քաջն Վարդանի մօքին վրայ, որով զօրավարը յօժարեցաւ վերադառնալ ղէպի Տարօն՝ իրենց արծուերոյնը, այն վստահութեամբ և հաւատքով թէ, Հայոց կողմէն ձեռք առնուած ընդդիմութեան գործը՝ տիրապէս և ուժգնօրէն պիտի յաջողի, որքան ատեն որ Հայերը մէկ սիրտ և մէկ հոգի ըլլան: Այս արարքը ցոյց կու տայ Քաջն Վարդան Մամիկոնեանին ունեցած հայրենասիրութիւնը, անընկճելի հաւատքը և միութենական գործութեան հրաշալի հետեւանքները . . . (Փար. 58):

Կարգ մը տեղերու մէջ, պարսիկները

բռնի ուժով եկեղեցիները կրակատունի փոխելու կ'աշխատէին և հոն ատրուշաններ շինելու կը ձեռնարկէին: Պետութիւնը կ'աշխատէր իր սրուշումները գործադրել տալ: Այսու ամենայնիւ, Հայոց կողմէն դեռ ապրտամբական շարժում մը չկար: Վահան Ամատունին, Վասակ Սիւնիին զլխաւոր հակառակորդն էր: Վահան Ամատունին կը խորհէր թէ, եթէ երբեք Վասակ ապստամբութեան չհաւանի Հայերէն կը սպաննուի և եթէ երբեք հաւանի, անոր պատանդ որդիները կը սպաննուին (Փար. 60): Վասակ, անորոշ, տարտամ և երկդիմի քաղաքականութեան մը կը հետեւէր: Մէկ կողմէն կ'ուզէր որ Հայերու հետ լաւ յարաբերութեան մէջ մնար, իսկ միւս կողմէն եթէ երբեք քրիստոնէութիւնը պաշտպանէր, մարդպանութեան պաշտօնը կորսնցնելու մտաւախութեան մէջ կը գտնուէր:

Այստապա՛ն նախարարները յունական քաղաքականութեան կողմնակից էին, իսկ՝ կարգ մը նախարարներ պարսկական քաղաքականութեան հետեւելու կողմնակցութիւն ցոյց տալ կ'ուզէին: Վասակ իր երկդիմի ընթացքովը ղէպքերուն կը հետեւէր: Եղիշէի վկայութեամբը «սրտի մօտք կալեալ էր զպարսկան օրէնս», իսկ Փարպեցին կը գրէ թէ «առաւել փառասէր՝ աստուածատեաց խորհրդոց» կը հետեւէր (Փար. 60):

Քաջն Վարդան նկատի ունենալով որ տարտամ քաղաքականութիւնը գործին վնաս կը հասցնէ, մանաւանդ որ «ի կարի հեղգալոյն մեծամեծ գործէին վնասք», իսկ «իրք ապստամբութեան» երկար ժամանակ գաղտնի չէր կրնար մնալ: Քաջն Վարդան իրեն մօտ խորհրդակցական ժողով մը գումարեց, հրաւիրելով «զպատուական եպիսկոպոսս և զականաւոր երիցունս և զաւագ տանուտեարս և զսեպուհսն» (Փար. 60), և այդ ժողովին մէջ խնդիրը բացէ ի բաց մէջտեղ դրաւ «Մինչև ցե՞րբ հանգուրժեմք թագուցանել զճշմարտութիւնն և կորնչիմք» (Փար. 61): Այս ժողովին մէջ, որ «ի վանս ապարապետին» ժողովուած էին, որոշեցին թէ իրենք քրիստոնեայ են և քրիստոնեայ կը մնան և պարսից դէնը կը մերժեն և թագաւորական հրովարտակը չեն ընդունիր և իւրուքն ամենայնի հետեւեալը կը կրկնէին. «Քաջութեամբ միայն մեռցուք, զանուն և զոգիս և եթ ժառանգ

գեսցուք՝ զի կենդանի իցէ ի մեզ Բերիստոս (Գ. Յեղ. 125)։

Քաջն Վարդանի ապարանքին մէջ տեղի ունեցած ժողովը Վասակէն գալանի տեղի ունեցած էր, որպէսզի ուխտապահներուն կողմէն ձեռք առնուելիք միջոցները, ծրագիրները չգիտնար և սրոշումներուն տեղեակ չի մնար։

Սակայն և այնպէս, ժողովին ներկայ նախարարներէն Զանգազան Ոստանիկ անմիջապէս շտապեց Վասակին լուրը տանիլ, սակայն յետոյ երբոր ձեռք ինկաւ, իբրեւ վատ և դաւաճան մատնիչ քարկոծումով սպաննուեցաւ (Փար. 61)։

Քաջն Վարդան շուտով գործի սկսաւ, ուխտապահներու գունդերը մասերու բաժնեց. արեւելեան, արեւմտեան և հիւսիսային կողմերը պահպանութեան բանակներ կազմեց, իսկ ինքն ալ դէպի հարաւային կողմը գնաց, Մաղկոտն գաւառին մէջ, Անգղ բերդաքաղաքին մօտ իր բանակը հաստատեց։ Քաջն Վարդանի կողմէն կազմուած գունդերը անմիջապէս գործի չի սկսան, վասնզի՝ «գաղաթէին զաւուրս ասթոյն» (Փար. 60), ինչ որ ցոյց կուտայ թէ այդ գործողութիւնները 450 տարուան Օգոստոս ամսուան մէջ տեղի կ'ունենային։ Հայոց սպարապետին համար, կարեւոր պարագայ մը կը կազմէր գիտնալ Վասակին զիրքը և անոր կարծիքը առնել, այս պատճառաւ ազգեցիկ եպիսկոպոսներ և քահանաներ Վարդանին ընկերակցութեամբ «մօտին ի թափ առ մարդպանն Հայոց» (Փար. 61)։ Վասակ, ըստ իր սովորութեանը, համաժողովին և համաձայնութիւն յայտնեց եղած ու ըլլալիք ձեռնարկներուն, երդումով ու Ս. Աւետարանով իր յայտարարութիւնը հաստատեց։

Այս միջոցին, Աղուաններէն գոյժ եկաւ թէ իրենց վրայ Պարսիկ զօրաւոր զօրագունդ մը եկած էր, ճորայ բանակէն Միհրնեսի հրամանով և թէ Հայերուն օգնութեանը պէտք ունին։ Վասակ, Քաջն Վարդանին թելադրեց որպէսզի Աղուանից օգնութեան փութայ, յայտնելով թէ ինք իր վրայ կ'առնէր Հայաստանի պաշտպանութեան գործը։ Քաջն Վարդան, Վասակին առաջարկը չկրցաւ մերժել, միայն թէ պահանջք դրաւ որ, յոյներէն օգնութիւն խնդրելու համար պաշտօնագիրներ գրուին

և նոր պատգամաւորներ որպէս Վասակ՝ Քաջն Վարդանին պահանջքը պարտաւորուեցաւ ընդունիլ։ Յոյներուն զրկուելիք պաշտօնական գիրերը ինքն ալ կնքեց «խրով մատանեաւ»։

Հայոց կողմէն գրուած այդ պաշտօնական գիրերը ուղղուած էին, Աղձնիք, Անգեղատուն, Ծոփք, Հաշտեանք և Եկեղեաց գաւառներուն յոյն կառավարիչներուն, ու այն կողմերը գտնուող հայ նախարարներուն, ինչպէս նաեւ Անտիոքի յոյն սպարապետին։

Պաշտօնական գիր մըն ալ պատրաստուեցաւ Բիւզանդիոնի նոր կայսեր Մարկիանոսին, որ Թէոդոս Բ. ի յաջորդած էր, այս առթիւ պատգամաւորութիւն մըն ալ կազմուեցաւ, և այդ պաշտօնին ընտրուեցաւ Վահան Ամատունին, Հմայեակ Մամիկոնեանը և Մհերուստան Արծրունին (Փար. 63)։

Անշուշտ մինչև այդ ժամանակ՝ Ատոմ Գնունի նախարարը Բիւզանդիոնէն վերադարձած պէտք էր ըլլար՝ Թէոդոս կայսեր մահը ծանուցանելով և նոր զիմուսի մը և պատգամաւորութեան մը անհրաժեշտութիւնը զգացնելով։ Այս եղելութիւնները, պէտք է դնել 450 տարուայ աշնան մէջ, Անպտեմբեր ամսուն։

Վասակ Սիւնին գոհ էր իր մտքովը, վասնզի՝ իրեն համար նպատաւոր քաղաքականութիւն մը պատրաստած էր։ Քաջն Վարդան սպարապետը Աղուանից երկիրը զրկելով՝ զայն Հայաստանէն հեռացուցած կ'ըլլար, ու Հայոց ընդդիմութեան զխաւոր դերակատարը՝ Քաջն Վարդանը վտանգի ենթարկուած կ'ըլլար Աղուանից երկրին մէջ։ Վասակ Սիւնին ուրախ էր և անմիջապէս փութաց տեղեկութիւն տալ Միհրնեսի, Աղուանից մարդպան Սեբուստ Նիստրականին (Գ. Յեղ. 140), և զօրավար Վեհշապուհին (Փար. 64)։

ՊԱՐԴԵՒԻ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ

(Շարունակելի՝ 7)

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Ս. ԱԹՈՌՈՅ ՆՈՐԱՊՍԱԿ ԵՐԵՔ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Երկու օրեր առաջ, Տանն Կիլիկիոյ հայրապետանոցէն հասած հեռագիր մը կ'աւեսէր քէ 21 Օգոստոս 1951 առաւօտեան ժամը 9ին, երուսաղէմ կը հասնին Ս. Արքուշոյ երեք նորապսակ եպիսկոպոսները: Ըստ այդ Մ. Արքուշոյ վանական խորհուրդի ցուցմունքներով լրացուեցան փառաւոր ընդունելութեան մը անհրաժեշտ բոլոր կարգադրութիւնները: 21 Օգոստոսի երեքօրեայ առաւօտէն իսկ եռուգեռի մէջ է Մայրավանքն ու հայկական քաղաքամասը: Հոգ. վարդապետներ, սարկաւազունք եւ աշակերտութիւն հետեւեցին կը լեցնէին քարգմանասունն ու յարակից կամարակապերը, մինչեւ վանքի աւագ դրան հրապարակը տեղ կը գրաւեն ժողովուրդի հոծ բազմութիւն ու համագլխատու հայ արիւնքներ երուսաղէմի երեք հայկական միութիւններուն (Բարեխորաց, Հ. Մ. Ը. Մ. եւ Հ. Ն. Մ.): Մինչ ուսիկաններու ջոկատի մը յանձնուած էր Գեր. եպիսկոպոսներուն անցնելիք համբուն հրակազութիւնը սկսելով քաղաքի հեռաւոր մասէն մինչեւ Մայրավանք: Ժամը կ. ա. 9ին կը սկսի հնչել Մայրավանքի մեծ զանգը ծանր ու հանդիսաւոր զարկերով ու Միաբանութիւնը եւ ուսանողութիւնը առաջնորդութեամբ հայ արիւնքներու երկարածիկ շարքերուն, ու ոսկեհանգերձ բարապաններուն կը յառաջանան դէպի հայկական քաղաքամասի մասեր, Գաւրի բերդին մօտիկ, ուր արդէն իսկ տեղ գրաւած են կառավարական պաշտօնեաներ ու կրօնական համայնքներու ներկայացուցիչներ:

Իսկ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. Մանասեան ընկերակցութեամբ Աւագ Թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի, վաղ առաւօտէն իսկ մեկնած էին դէպի Գալէնիա օղակայանը, ուր հետեւեցին կը հասնին, սաղիմահայ միութիւններու ներկայացուցիչներ, եւ զանազան ազգայիներ:

Կ. ա. ժամը 9ին օղակայան կ'իջնէ օղակայան, ու երբ կ'երեւան Գեր. Տեղապահ Սրբազանը, Սուրեն եւ Նորայր եպիսկոպոսներ, օղակայանին մէջ խոնուած դիմաւորողներու բազմութիւնը կը ծափահարէ խանդավառ: Յետ օղջազուրումի անոնք կը տեղաւորուին յասուկ ինքնաշարժերու մէջ, ու աւելի քան 20 ինքնաշարժերու երկարածիկ կարաւանը ընթացք կ'առնէ դէպի երուսաղէմ:

Ժամը 9.30ին, ընկերակցութեամբ հոծ շախմատի մը, անոնք արդէն կ'երեւան հայոց քաղաքամասի մասին, ուր կը սպասեն Միաբանութիւն, աշակերտութիւն, պաշտօնական ներկայացուցիչներ ու ժողովուրդի խումբերամ բազմութիւնը: Դժբախտաբար կարելի չեղաւ եկեղեցական քաթօրը սկսիլ այս կէտէն, Վեն. Ապստոլան քաղաքին դառնալէս մահուան պատճառաւ ու քաթօրը յառաջացաւ մինչեւ Մայրավանք լուռ հանդիսաւորութեամբ, հայ քէ օտար ժողովուրդի խումբ բազմութեան ընդմէջէն ուրոնք կը լեցնէին զետեւէն մինչեւ տանիքները:

Վանքի աւագ դրան մասին կազմուեցաւ Հրաշափառի քաթօրը, ու երեք սրբազանները հանգերձուած միասեռակ ու բանկազին շուրջառնելով առաջնորդուեցան դէպի Մայրավանք ու Ս. Յակոբեանց Տաճարը, որ այս պահուն այնքան շեղօրէն լուսազարդուած էր բազմաթիւ արծաթ կանթեղներու փալիլումներով:

Քաթօրը կանգ առաւ Ս. Գլխադրի մասրան առջեւ, ուր երեք նորապսակ սրբազաններ կատարեցին իրենց առաջին ուխտը, եւ ապա յառաջացան դէպի աւագ խորանը ուր Գեր. Տեղապահ Սրբազանը տուաւ իր օրհնութիւնը, որմէ ետք պաշտօնական հիւրեր եւ կրօնական ներկայացուցիչներ ներկայացուցին իրենց շնորհաւորութիւնները նորապսակ սրբազաններուն ու մեկնեցան:

Ապա Գեր. Տեղապահ Սրբազանը եւ Գեր. եպիսկոպոսներ Ս. Արոտոյն օրհներգով առաջնորդուեցան պատրիարքարանի լուսազարդ դահլիճը: Թափօրը հազիւ իր ընթացքը կ'առնէր հայազգի ամբոխին ընդմէջէն որ կը լեցներ Մայր Տաճարը, գաւիթն ու շրջակայ շանիկները մինչեւ պատրիարքարան:

Պատրիարքարանի դահլիճին մէջ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան, ի դիմաց Ս. Յակոբեանց Միաբանութեան շնորհաւորեց Գեր. Տեղապահ Հայրն ու օծակից Տ. Տ. Սուրեն եւ Նորայր Սրբազանները, որուն պատասխանեց Գեր. Տեղապահ Հայրը խանդավառ ու սիրովիւ արտայայտութեամբ պատկերացնելով նոյն ասեմ հսկայական վերելքն ու նուաճումները որ կատարած է Արարատի փեշերուն փռուած Հայկական Հանրապետութիւնը, Հայց. եկեղեցին ու Հայ Ժողովուրդը, լեցնելով բոլորին հոգիները սիրովն Հայրենիին ու Հայաստանեայց Ս. եկեղեցիին: Կը մեջբերենք հետեւեալ մասերը իր խօսքերէն.

«Հոգեւորն Հայրեր եւ հայրենակարօս սիրելիներ,

«Կը զգամ քե բոլորիդ նայումսքին մէջ կայ կարօտագին զգացումը հայրենիքին եւ Ս. Էջմիածինին: Մենք ոչ միայն ուխտաւորներ ենք մեր սիրելի հայրենիքին, այլեւ վկաներ մեր Ժողովուրդի կեանքին:

«Մեզի առիքը տուեցաւ տեսնելու մեր հայրենի դաւոտները, հովիտները, լեռնալանջերը, որոնք երբեմն իբրեւ բոյն կը ծառայէին օձերու եւ մողեսներու եւ որոնց վրայ այժմ կայ ցորենի ոսկին եւ այգիներու եւ անտառներու բաւեր: Տակաւին երեկ հայ գիւղացին իր սերմը հողին յանձնելէ յետոյ անձկագին կը սպասէր երկնքի օրհնաբեր անձրեւին: Այսօր, լայն ջրանցքները ջրային բարիքով կ'արգասաւորեն մեր հողերը: Հին արօրը այլեւս բանգարանային ապրանք դարձած է եւ հողերը կը մշակուին քաղաքներով եւ նման մեքենաներով:

«Մեզի առիքը տուեցաւ նոյնպէս տեսնելու երեւանի մէջ եւ շուրջը զսնուող կարգ մը գործարաններ, որոնց մէջ կը հանդերձուի մեր հողերուն եւ մեր լեռներուն բարիքը եւ որոնց իւրաքանչիւրին մէջ կ'աշխատին 3.000-18.000 հայ բանուորներ: Տեսնեմք մեր

կրթական եւ մշակութային հաստատութիւնները, արուեստի տուններ որոնց շնորհիւ հայ հոգին աւելի կը հայտնայ եւ կը յառաջդիմէ: Օրէ օր կը զեղեցկանայ երեւանը եւ կը զարդարուի բազմաթիւ շէնքերով: Սակայն ամենէն ուշագրաւը այդ կառուցումներուն մէջ հին հարստապետութեան վերջանումն է: Համաձայն վրացի բանաստեղծի հաւատարմին, որ վեց ամիսներ առաջ երեւան այցելած էր, հայ ոնով շինուած շէնքերը՝ նայումսքներ իրենց ֆաշիստ հրաւեր ունին:

«Տեսնուեցայ Պաղեսիոնէն, Լիբանանէն եւ եգիպտոսէն հայրենագարձ ծանօթներու հետ: Բոլորն ալ զոհուեալութեամբ խօսեցան իրենց կեանքին մասին: Առաջին տարիներու դժուարութիւնները զրեք վերջ զրեք են, բոլորն ալ տուններու տէր եղած, իրենց ճնշեալութիւնը կազմած եւ իրենց աշխատանքին լծուած քաղաքացիներ են դարձած:

«Տեսնեմք մեր Սրբութիւն Սրբոց Էջմիածինը: Վայելցիմք Նորին Ս. Օծութիւն Մայր Արոտոյ զահակային հիւրասիրութիւնն ու շնորհները: Ամենայն Հայոց Կաթողիկոսը բացառիկ դեմքերէն մին է մեր եկեղեցւոյ վերջին հարիւր տարւան մեծ եկեղեցականներու կարգին: Իբրեւ իմաստուն եւ բարձրօրէն զարգացած զահակայնէրէն մին Լուսաւորչայ Արոտին:

«Ի տես այս բոլորին, չի կրնար չհրճուիլ իրական հա՛յ մարդը եւ չմարդիկ որ Տէր անփորձ պահէ մեր երկիրը եւ մեր Ժողովուրդը ի վայելումն իր զաւակներուն եւ ի փառս հայ անուան:»

Գեր. Տեղապահ Հօր խօսքէն ու օրհնութենէն յետոյ Միաբանութիւն եւ Ժողովուրդ մօտեցան աշխարհայրի եւ շնորհաւորութեան նորապսակ երեք եպիսկոպոսներուն:

«Սիւն» անգամ մը եւս կուգայ շնորհաւորել մեր սիրելի Գեր. Տեղապահ Սրբազան Հայրն ու Գեր. զոյգ Սրբազանները իրենց եպիսկոպոսական այս ձեռնադրութեան առիթով ու հայցել որ Ամենակալը ըլլայ իրենց հովանին ու առաջնորդ, ի շինութիւն եւ ի պայծառութիւն Ս. Յակոբեանց փառապանծ Ս. Արոտոյն եւ Հայց. Մայրենի Ս. եկեղեցւոյն:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Գեր. Տեղապան Սրբազան Հօր եւ Իշխան Նայիֆի միջեւ փոխանակուած հետագիւրներ՝ Ապսալլան Իպն Հիւսէյն բազաւորի դառնադէս մահուան առիթով:

19 Օգոստոս, Պէյրութ

Նորին Վսեմութիւն

Իշխան Նայիֆ

Խնամակալ Յորդանանի Հաշիմական
Քաղաւորութեան, Ամման

Հայաստանէն վերադարձին՝ Պէյրութի մէջ խորունկ ցաւով լսեցի Ձեր սիրելի եւ Վեհափառ Հօրը եւ մեր թանկագին բարեկամին աղէտաւոր մահը: Մեծ է կորուստը ինչպէս Հաշիմական Տանը՝ այնպէս ալ իր բոլոր հպատակներուն համար: Իմ խոր ցաւակցութիւնները Ձեզի եւ Ձեր վշտահար ժողովուրդին:

Տեղապան Ս. Արաոյն Երուսաղէմի
ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԷՐԵԱՆ

22 Օգոստոս, Ամման

Նորին Ամենապատուութիւն

Տ. Եղիշեկ Ս. Արքեպ. Տէրտէրեան

Տեղապան Հայոց Պատրիարքարանի

Իմ, Հաշիմական Տան, եւ Յորդանանի բնակչութեան կողմէ՝ շնորհակալութիւն կը յայտնեմ Ձերդ Ամենապատուութեան եւ հայ համայնքին կողմէ՝ ցոյց տրուած համակրութեան եւ սրտագին ցաւակցութեան համար:

ԽՆԱՄԱԿԱԼ ԻՇԽԱՆ ՆԱՅԻՖ

ԱՄԻՆՎԵՐՋԻ ՀԱՆԳԻՍՈՒԹԻԻՒՆՔ

Ս. ԱՅՈՒՌՈՅ Ս. ՔԱՐԳՄԱՋԱՅ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ

Վեհ. Ապտալլան թագաւորի դառնադէտ մահուան առթիւ յայտարարուած սուգին պատճառաւ այս տարի կարելի չեղաւ, Նախորդ տարիներու չընդունեամբ կատարել Ս. Թարգմանչաց Նախակրթարանի ամսվերջի հանդէսը:

18 Օգոստոս Շարաթ երեկոյան ժամը 5ին, Նախադասութեամբ Տեղապահի փոխանորդ Հօգ.

Տ. Հայկազուն Վրդ. Արրահամեանի, անպաշտօն հաւաքոյթ մը կազմակերպուեցաւ Ս. Թարգմանչաց վարժարանի սրահին մէջ, որուն հրաւիրուած էին Նախակրթարանէն շրջանաւարտ 24 սան-սանուհիներու ծնողներն ու մերձակողները ինչպէս նաև վարժարանի ուսուցչութիւնը:

Աչակերտներու կողմէն արտասանուեցան, հայերէն, անգլիերէն եւ արաբերէն լեզուներով ճառեր ու արտասանութիւններ, որմէ յետոյ վարժարանին տեսուչ Հօգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան կարգաց իր տարեկան տեղեկագիրը, ապա Հօգ. Նախագահ Հայրսուրբը բաժնեց մըրցանակներ վարժարանի յաջողակ սաներուն, ինչպէս նաև աւարտական դասարանի վկայականներն ու Ս. Աթոռէն անոնց եղած նուէրները:

Հաւաքոյթը փակուեցաւ Նախագահ Հօր փական խօսքովն ու աղօթքովը:

Իսկ 20 Օգոստոս Բշ. վարժարանի շրջանաւարտ սաները տուին իրենց հրաժեշտի եւ պատուոյ վերջին սեղանը վարժարանի տեսչութեան եւ աչակերտութեան, որուն ընթացքին տեսուչ Հայրսուրբը եւ իւրաքանչիւր ուսուցիչ տուաւ իր հուսկ խրատականը մեկնող սաներուն, թեւադրելով անոնց հաւատարմութիւն իրենց ազգին, եկեղեցիին, լեզուին, եւ Ս. Յակոբեանց սրբազան յարկին:

Այս առթիւ շնք վարանի մերադն հասարակութեան յայտնելու որ Ս. Աթոռիս Ս. Թարգմանչաց վարժարանը եղած է իր կոչումին զիտակցութեամբը լեցուն հաստատութիւն մը, վարժարանի հիմնարկութեանէն առկին մեր ժողովուրդին տուած է 300է աւելի շրջանաւարտներ, Ասոնք բոլորն ալ օտար զարոյցական եւ այլ շրջանակներու մէջ եւ կամ կեանքի զանազան ասպարէզներու մէջ ունեցան Նախանձելի զիրք ու յառաջդիմութիւն: Մեր աչակերտներէն շատեր պաղեստինեան վերջին պատերազմին հետեւանքով ցրուեցան արտասահմանեան զանազան հայ գաղութներուն մէջ, ուրախութեամբ կ'իմանանք թէ անոնք ազգային, զարոյցական եւ այլ շրջանակներու մէջ ունեցած են աչքի զարնող զիրք եւ աւանդելութիւն, պատիւ բերելով այսպէս Ս. Թարգմանչաց վարժարանին եւ զայն հովանաւորող Ս. Յակոբեանց պանծալի Աթոռին:

Իսկ ներկայ տարւոյ մեր շրջանաւարտները այժմէն իսկ յայտարարած են փայլուն զիրք երեսօղակի օտար վարժարաններէն ներս: Հակառակ որ մեր վարժարանը կը բաղկանայ Նախակրթարանի վեց դասարաններէն, մեր աչակերտներէն ոմանք յաջողած են օտար բարձրագոյն վարժարաններու մէջ իրենց ուսման ընթացքը շարունակել, սկսելով երկրորդական վարժարաններու երկրորդ (Secondry Second) դասարանէն:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

● 3 Օգոստ. Ուր. — Երեկոյեան ժամերգութիւնն և վաղուան տօնին նախատօնակը կատարուեցաւ Ս. Թակորեանց Մայր Տաճարի Ս. Էջմիածին մատուռին մէջ, նախագահութեամբ Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեանի:

● 4 Օգոստ. Շր. — Թիւացակ Տապանակին Հնոյ եւ Նորոյ Ս. Եկեղեցոյ. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Թակորեանց Մայր Տաճարի Ս. Էջմիածին մատրան մէջ. պատարագիչն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

Կէսօրէն ետք Ս. Թակորեանց Մայր Տաճարին մէջ, կատարուեցաւ Ալլակերպութեան տօնին մեծահանդէս նախատօնակը, նախագահութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. Մանասեանի: Ըստ աւանդութեան Պայծառակերպութեան տօնին դուգադիպած է քրիստոնէական առաջին եպիսկոպոսապետին և Երուսաղէմի Ս. Աթոռիս առաջին պատրիարքին Ս. Թակորոս Տեառնեղբոր զանակալութիւնը, որուն համաձայն Ս. Աթոռիս դարաւոր սովորութիւնն է վարդապետի նախատօնակին հետեցնել արեղարմի յիշատակութիւնը սոյն իրողութեան: Ըստ այդ յետ նախատօնակի կատարուեցաւ նաև, Տեառնեղբոր զանակալութեան յիշատակին նուիրուած հանդիսութիւն:

Երեկոյեան Ս. Թակորեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Եկեցէ և Հսկում:

● 5 Օգոստ. Կիր. — Տօն Ալլակերպութեան Տեառն. հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Թակորեանց Մայր Տաճարին մէջ, պատարագեց և քարոզեց Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. Մանասեան, բնարան ունենալով. «Բարեօք է մեզ աստ լինիլ. եթէ կամիս, արասցուք երկա տաղաւարս՝ մի քիչ և մի Մովսէսի և մի Եղիայի» (Մատթ. ԺԷ. 4):

● 6 Օգոստ. Բշ. — Թիւացակ մեղեդոյ. Ս. Թակորեանց Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Հոգ. Տ. Կիւրեղ Արդ. Գարեկեան: Յետ Ս. Պատարագի Միաբանութիւն և Ժողովուրդ թափօրական զնայքով այցելեցին երջանկայիշատակ Տ. Կիւրեղ Բ. Ս. Պատրիարք Զօր զերեղմանը, ինչպէս նաև հին կրատան և Զամ թաղի զերեղմանավայրերը, ուր կատարուեցան հոգեհանգստեան արարողութիւններ:

«Տեղապահ Զօր ֆոխանորդ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. ի յանձնարարութեամբ, Հոգ. Տ. Զաւէն Արդ. Զինչինեան ընկերակցութեամբ Բար. Տիր. Թովսէփ Սրկ. Նաղարեանի և Տիր. Սահակ Գալայեանի 4 Օգոստոսին մեկնեցաւ Ամմանի մօտակայ Ռոսէյֆա գիւղը, ուր կը գտնուի 15-20 տուն հայ բնակչութիւն:

Հոգ. Հայրաւորը վարդապետի տօնին առթիւ 4, 5 և 6 Օգոստոսին կատարած է ժամերգութիւն, Հսկում և Ս. Պատարագ, տեղույն հայկական մատրան մէջ, քարոզած և հաղորդած է զիւղին հայ բնակչութիւնը, խօսելով ու հոգեպէս մխիթարելով բոլորը:

Հոգ. Հայրը 7 Օգոստոսին վերադարձաւ մայրավանք:

● 10 Օգոստ. Ուր. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը պաշտուեցան Ս. Թակորեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեանի:

● 11 Օգոստ. Շր. — Առաջին Լուսաւորչին մեղոյ Ս. Թաղէտի Առաքելոյ եւ Սանդիսոյ Կուսին. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Թակորեանց Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ, պատարագիչն էր Հոգ. Տ. Մաշտոց Արդ. Բարկուսեան:

● 12 Օգոստ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Թարութեան Տաճարի վերնամատուռին մէջ, Պատարագեց Հոգ. Տ. Գարեգին Արդ. Գաղանճեան: Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ խաղողորհնէք:

● 19 Օգոստ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, պատարագեց Հոգ. Տ. Գարեգին Արդ. Գաղանճեան:

● 24 Օգոստ. Ուր. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը պաշտուեցան Ս. Թակորեանց Տաճարի Ս. Էջմիածին մատրան մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպիսկոպոսի:

● 25 Օգոստ. Շր. — Տօն Շողակաթի. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Թակորեանց Մայր Տաճարի Ս. Էջմիածին մատրան մէջ, պատարագեց Հոգ. Տ. Կիւրեղ Արդ. Գարեկեան:

Կէսօրէն յետոյ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Սրբազան Զօր, Գեր. եպիսկոպոսներ, Հոգ. վարդապետներ, սարկաւազներ եւ աշակերտներ հանդիսաւոր զնայքով իշան Գեթսեմանի Ս. Աստուածածնայ Տաճար. Մուտքի հանդէսը սկսաւ Տաճարի արտաքին բակէն, ապա կատարուեցան երեկոյեան ժամերգութիւնն և վաղուան տօնին մեծահանդէս նախատօնակը: Արարողութեան ներկայ էր Ժողովուրդի խոռոնեամբ բաղմութիւն, Յետ նախատօնակի վերջ հանգիստէ մը և երեկոյեան ընթերքէն յետոյ զիշխարխառն կատարուեցաւ Եկեցէ, Հսկում և ապա առաւօտեան ժամերգութիւնն նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Սրբազանին. սոյն արարողութիւնները տևեցին մինչև զիշխարային ժամը 11ը, որմէ ետք Միաբանութիւն և Ժողովուրդ վառեալ ջահերով և հանդիսաւոր զնայքով վերադարձան մայրավանք:

● 26 Օգոստ. Կիր. — Վերափոխումն Ս. Աստուածածնի. առաւօտեան ժամը 7ին, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհանեանի, Գեր. եպիսկոպոսներ, Հոգ. վարդապետներ և ուսանողութիւն իշան Ս. Աստուածածնայ Տաճար: Մուտքի հանդիսաւոր Հրաշափառէն ետք, եպիսկոպոսական պատարագը Ս. Կոյսի զերեղմանին վրայ մատուց Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհանեան, որ նաև քարոզեց բնարան ունենալով, «Մի է աղանի իմ, կատարեալ»: Յետ

Ս. Պատարագի կատարուեցաւ Անդաստան: Այսօր
էս Ս. Աստուածածնայ Տաճարը կը յորդէր հայ
հաւատացեալներու բազմութեամբ:

● 27 Օգոստ. Բշ. — Յիւստակ Մեռնից. Ս. Պա-
տարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր
Տաճարի Ս. Գլխաղբի մատրան մէջ: պատարա-
գին էր Հոգ. Տ. Օշական Արդ. Մինասեան: Յետ
Ս. Պատարագի կատարուեցան հանդիսաւոր Հան-
գըստեաններ երանաշնորհ Տ. Կիւրեղ Ս. Պատրի-
արք Հօր գերեզմանին վրայ, ինչպէս նաև Չամ
թաղի և հին կրատան գերեզմանավայրերուն
մէջ:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● 6 Օգոստ. Բշ. — Կէսօրէն առաջ, ժամը
11.30ին երուսաղէմի վաւ. Բաղաքապետ Արէֆ
Փաշա էլ-Արէֆ, ընկերակցութեամբ քաղաքա-
պետարանի անդամաց պատրիարքարան այցելեց
շնորհակալութիւն յայտնելու համար ընտրու-
թեանց առթիւ հայ դպրութիւն իրեն նկատմամբ
ցոյց տուած մատակարարութեան համար:

● 24 Օգոստ. Ուր. — Գեր. Տեղապահ Ս. Հօր
և նորապսակ եպիսկոպոսներուն բարիգալուստի
և շնորհաւորութեան եկան. — Լատինաց Պատր.
Փոխանորդը իր Միաբանութեամբ. — Ֆրանչիսկե-
ան Միաբանութեան Կիւսդոտը. — Տօմինիք-
եան Միաբանութեան վանահայրը. — Ուղղա-
փառ Ասորոց Տեսուչը. — Երուսաղէմի Մութա-
սարիֆը իսման Պէշ Հաշէմ. — Դպտոց Գեր. Ե-
պիսկոպոսը իր հետեւորդներով. — Անկիլքան
եպիսկոպոսի Փոխ. Հայր Էվըրի. — Ս. Տեղեաց
քարտուղար Տիար Նաճիպ Պէշ Պաւարչի և ա-
ղանաւոր անձնաւորութիւններ, փաստաբաններ
ու բժիշկներ:

● 25 Օգոստ. Շր. — Կէսօրէ առաջ, ժամը
11.30ին, երուսաղէմի նորընտիր Անգլիական
Հիւսյատոսը Տիար Ռ. Ս. Մօնի-Փէննի, ընկե-
րակցութեամբ իր փոխանորդին, տուաւ իր ա-
ռաջին պաշտօնական այցելութիւնը Գեր. Տե-
ղապահ Ս. Հօր և այդ առիթով շնորհաւորեց ե-
րեք նորապսակ եպիսկոպոսները:

● 30 Օգոստ. Եշ. — Գեր. Տեղապահ Սրբա-
ղան Հայրը ընկերակցութեամբ նորապսակ երկու
եպիսկոպոսներու և Միաբան Հայրերու փոխա-
ղարձ այցելութիւն տուաւ. Լատինաց Ամեն. Ս.
Պատրիարքին, Ֆրանչիսկեանց Գեր. Կիւսդոտին,
և վաւ. Բաղաքապետին:

● 31 Օգոստ. Ուր. — Կէսօրէ առաջ, ժամը
11ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը ընկերակցու-
թեամբ երկու նորապսակ եպիսկոպոսներու և
Հոգեշնորհ Աւագ Թարգման Հօր, փոխաղարձ այ-

ցելութիւն տուաւ տեղւոյս Բրիտանական Բնդհ.
Հիւպատոսին՝ Հիւպատոսարանի տան մէջ:

— Կէսօրէ վերջ, ժամը 3.30ին, Գեր. Տեղա-
պահ Ս. Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Անու-
շաւան Արդ. Ջղջանեանի և Տիար Կարպիս Հին-
դիւանի ներկայ գտնուեցաւ երուսաղէմի Բաղա-
քապետարանի կողմէ տրուած Ապտալլահ թա-
գաւորի մահուան քառասունքի սգահանդէսին,
Ռաուտայի մեծ սրահին մէջ:

● 7 Սեպտ. Ուր. — Գեր. Տեղապահ Ս. Հայրը
ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլան-
եանի, մեկնեցաւ Ամմանի արքունիքը շնորհա-
ւորելու նորընտիր թագաւորը Ն. Վեհ. Թաւալ
Առաջինը:

● 9 Սեպտ. Կիր. — Հոգ. Տ. Հայկազուն Վրդ.
Աբրահամեան մասնաւոր առաքելութեամբ Սիւ-
րիա-Լիբանան մեկնեցաւ, յառաջիկայ ուսում-
նական տարեշրջանի համար նոր ժառանգ. սաներ
ընտրելու:

ՄԻԱՐԱՆ ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Յաւով կը հաղորդենք մահը մեր աշխատաւոր
Միաբանութեան երէց անդամներէն բարեկրօն
Կարապետ Սարգիսեանին, որ տեղի ունեցաւ 10
Օգոստոս Ուրմաթ առաւօտուն, սրտի տաղանայի
մը հետեւանքով:

Հանգուցեալը ծնած էր Մարդուան 1880ին,
իր երիտասարդ հասակին իսկ անցած էր Ս. Աթո-
ռոյս աշխատաւոր միաբանութեան շարքին ու
երկար տարիներ ծառայած որպէս շինութեանց
վերահսկիչ, մօմագործ և մօմավաճառ:

Նկարագրով բարի, համակրելի և Ս. Աթոռին
ծառայութեան ու վարկին հոգեւին նուիրուած
անձ մը, որուն մահը տրտմութեամբ կը համակէ
Ս. Աթոռոյս Միաբանութիւնը:

Իր թաղումը կատարուեցաւ նոյն օրն իսկ,
նախազանութեամբ Գեր. Տեղապահի Փոխ. Հոգ.
Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեանի և մասնակ-
ցութեամբ բոլանդակ Միաբանութեան, Թաղ-
ուեցաւ Չամ թաղի գերեզմանավայրին մէջ:

Յիշատակն արգարոց օրհնութեամբ եղիցի:



Ամերիկայէն Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեան կը փափաքի «Ճառոց Գիրք» մը ունենալ: Մեր յարգելի ազգայիններէն անոնք որ ունին տրամադրելի — ծախս — օրինակ մը բոլ հաճին իմացնել Հոգեւորն Հօր նիւնեալ հասցեով. —

Rev. Asoghig Ghazarian, Armenian Church, 3200 West Adams. Boulevard,
Los - Angeles, 16, Calif. U. S. A.

«ՍԻՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒՂԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱԿՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵՍԼ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՐԵՐ ԵՐԳ, (արծակ բերթուած), 1931-1934: Հրայր Ոստանի (Անուշաւան Ֆրանկիւլեան): Պէյրութ, տպ. «Հրազդան», 1934, էջ 48: Նուէր հեղինակէն:

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՕՐԵՐԸ, Անուշաւան Ֆրանկիւլեան: Պէյրութ, 1948, էջ 98: Նուէր հեղինակէն:

ԽՈՆԱՐՀ ՀԵՐՈՍՆԵՐ, - Ա. Գիրք, (Բ. տպագրութիւն), Կոմս (Վահան Փափազեան): Պէյրութ, տպ. «Սարգիսեան եւ որդի», 1950, էջ 95: Նուէր հեղինակէն:

ՀԱՅՈՍԱՍԱՆ ԵՒ ԴՐԱՑԻ ԵՐԿԻՐՆԵՐ, (3 տարբեր բարոյսներ). Կազմեց Արտաշես Արեղեան: Տրդ տպագրութիւն, (վերամշակուած եւ բարեփոխուած): Նուէր Արտաշես Արեղեանէ:

THE ARMENIAN CHURCH & HER TEACHINGS, by Rt. Rev. Bishop Sion Manoogian. 53 pages. Նուէր հեղինակէն:

GESCHICHTE ARMENIENS, Ein Abriss, Dr. Von Artasches Abeghian, (Universitat Berlin), Stuttgart, 1948, 61 pages. Նուէր հեղինակէն:

DAS ARMENISCHE VOLKSEPOS, Ein Betrag Von Dr. Artasches Abeghian. Berlin, Gerdruckt in der Reichsdruckerei, 1940, Jahrgang XLII. Նուէր հեղինակէն:

ՅՐԱՆՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՐ, Թարգմանեց Սահակ Պալըզեան: Դահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, 1944, էջ 79: Նուէր Թարգմանիչէն:

ԱՆԳԼՈՒԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՐ, Թարգմանեց Սահակ Պալըզեան: Դահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, 1944, էջ 51: Նուէր Թարգմանիչէն:

ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՐ, Թարգմանեց Սահակ Պալըզեան: Դահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, 1944, էջ 67: Նուէր Թարգմանիչէն:

ՓՈՔՐԻԿ ՈՐՄԱՆԴԻՐԸ, հեղինակ Շարլ Կիւյօն, Թարգմանեց Սահակ Պալըզեան: Դահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, 1944, էջ 40: Նուէր Թարգմանիչէն:

ՎԵՅ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՐ, Հանս Անտէրսըն, Թարգմանեց Սահակ Պալըզեան: Դահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, 1944, էջ 67: Նուէր Թարգմանիչէն:

ՕՏԱՐՈՒՀԻՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ, (պատմուածքներ), հեղինակ Սահակ Պալըզեան: Դահիրէ, տպ. Նեղոս. 1942, էջ 52: (Նուէր):

ՌՈՒՍԻՍ ԻՆՔՆՈՇՍՐԺՆԵՐ ՈՒՆԻ ՀԻՄԱ, հեղինակ Միրայէլ Զոյլէնք, Թարգմանեց Սահակ Պալըզեան: Դահիրէ, Տպ. Նուպար, 1943, էջ 4: Նուէր Թարգմանիչէն:

ՏԱՍԸ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՐ, Ուիլիլմ Սարոյեան: Թարգմանեց Սահակ Պալըզեան, Դահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, 1947, էջ 70: Նուէր Թարգմանիչէն:

ԲԺԻՇԿԻ ՄԸ ԽՐԱՏՆԵՐԸ ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ, հեղինակ Տօրթ. Յ. Պալեան: Հրատարակութիւն Մտաւորական Սպասարկութեանց Կրասննակի թիւ 4: Դահիրէ, տպ. Նուպար, 1943, էջ 32: Նուէր Սահակ Պալըզեանէ:

Ս. ԱԹՈՌՈՅՍ ՏՊԱՐԱՆԷՆ ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳԻՐՔԵՐ

❧ 1948 - 1951 ❧

- Հասրնիք Պատմաբաններ, հայացուց՝ Մ. Ե. Ն., Բ. տպ. 1948, էջ 247,
գին 150 ֆիլս.
- Հայաստանայց եկեղեցին Երեկ եւ Այսօր, Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, տպ. 1948,
էջ 132, գին 150 ֆիլս.
- Ակեղաւառ, (քանասեղծական), Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, տպ. 1948, էջ 48,
գին 100 ֆիլս.
- Վարդանանք, (Թասերախաղ վեց արարով), Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, Վարդանանց
Գոյամարտի 1500-ամեակի առիթով, տպ. 1951, էջ 56, գին 150 ֆիլս.
- Ակամայ Անգրազարձուրիւնք Տ. Դրիգոր Պետրոս Ժն. Աղանանեան Կարսինալին իր
Հովուական Թուղբերուն առիթով, Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, տպ. 1951, էջ 42,
գին 100 ֆիլս.
- Ժամագիրք Հայաստանայց Ս. Եկեղեցւոյ (գրպանի), Զ. տպ. 1948, էջ 672,
գին 350 ֆիլս (լաթակազմ):
- Տաղարան Հայաստանայց Ս. Եկեղեցւոյ, Դ. տպ. 1949, էջ 383, գին 350 ֆիլս.
- Տեսակ Տարեկան Հանդիսաւոր արարողութեանց Մեքոյ Յարութեան Տաճարին, Դ.
տպ. 1950, էջ 105, գին 150 ֆիլս.
- Դուռագներ Մանուկ Յիսուսի Կեանքէն, Եղիշէ Արք. Դուրեան, (Կաղանդչիք հայ
մանուկներու), Բ. տպ. 1950, էջ 62, գին 100 ֆիլս.
- Նարեկ Աղօրամասեան Ս. Դրիգոր Նարեկացւոյ, արդի հայերէնի վերածննդ՝ Թոր-
գոմ Եպիսկոպոս, Դ. տպ. 1950, էջ 484, գին 350 ֆիլս (լաթակազմ):
- Սարսուռներ, Դանիէլ Վարուժան, տպ. 1950, էջ 78, գին 150 ֆիլս.
- Հացին Երզր, Դանիէլ Վարուժան, տպ. 1950, էջ 62, գին 150 ֆիլս.
- Գանձարան Աղօթից, Դ. տպ. 1951, էջ 167, գին 100 ֆիլս.
- Տերունական Աղօթք, (Հոգեւոր մեկնաբանութիւն), Դրիգոր Սրկ. Հ. Գալուստեան,
տպ. 1951, էջ 148.
- Խորենացի, Եղիշէ եւ Հ. Ներսէս Ակիւնեան, գրեց Հրանդ Բ. Արմէն, տպ. 1951,
էջ 110, գին 150 ֆիլս.
- Տեսութեան եւ Խաղաղութեան Երգեր, Մատթէոս Զարիֆեան, տպ. 1951, էջ 96,
գին 150 ֆիլս.
- Կեանքի ու Մահուան Երգեր, Մատթէոս Զարիֆեան, տպ. 1951, էջ 109,
գին 200 ֆիլս.
- Մաղբանք վասն Մայր Արուոյ եւ Հայրապետի ազգիս, տպ. 1947, էջ 14, գին
50 ֆիլս.